



AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

Center *for*  
Responsible Mining

Հանքարդյունաբերության օրենսդրության  
բարեփոխման նախաձեռնություն

# Հայաստանի հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմի վերլուծություն

Մաթթեու Ջենաչի  
Մայնինգ Փոլիսի Գրուպ, ՆՅՈՒ ՅՈՐԸ, ԱՄՆ

Նոյեմբեր 2015

[mlri.crm.aua.am](http://mlri.crm.aua.am)

# Հայաստանի հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմի վերլուծություն

Մաթթու Ջենաշի (2015)

Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն,  
ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն

**Հիմնաբառեր`** Հանքարդյունաբերություն, Պատասխանատու, Հայաստան, Դատական գործեր, Շրջակա միջավայր

## Փաստաթղթերի շարքի և ՀՕԲԼ-ի մասին

Հայաստանի հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմի այս վերլուծությունը պատրաստվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն» (ՀՕԲԼ) ծրագրի շրջանակներում: ՀՕԲԼ-ը հնարավոր դարձավ **Թուֆենկյան» հիմնադրամի** ֆինանսական աջակցության շնորհիվ, նախաձեռնության նպատակն է երաշխավորել, որ հանքարդյունաբերությունը երկրին և տեղական համայնքներին տրամադրի բավարար օգուտներ: Նախաձեռնության նպատակներից է մշակել և Ազգային ժողովի խմբակցություններին ներկայացնել այնպիսի օրինագծեր, որոնք կավելացնեն հանքարդյունաբերության տված հասարակական և տնտեսական օգուտները և միաժամանակ կնվազեցնեն շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա ունեցած բացասական ազդեցությունները: ՀՕԲԼ-ի գործունեության գլխավոր առանցքը քաղաքացիական հասարակության, շահերի պաշտպանության խմբերի, գիտական հաստատությունների և համապատասխան ազգային ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունն ու գործընկերությունն է: ՀՕԲԼ-ը համագործակցում է գործադիր և օրենսդիր մարմինների հետ` օրենքների նախագծերը ԱԺ-ում անցկացնելու համար: Ավելին իմանալու համար այցելե՛ք` <http://mlri.crm.aua.am>:

## ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի մասին

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՀԱՀ ՊՀԿ) հետազոտական աշխատանքի, կրթության և շահերի պաշտպանության միջոցով նպաստում է Հայաստանում սոցիալական, բնապահպանական և տնտեսական առումով պատասխանատու հանքարդյունաբերության` աշխարհում հայտնի լավագույն փորձի յուրացմանը, փոխանցմանն ու հարմարեցմանը: Այս նպատակին հասնելու համար ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը կներգրավի բոլոր շահագրգիռ կողմերին` բնապահպանական խմբերին, ֆինանսական հաստատություններին, հանքարդյունաբերության ոլորտի, քաղաքացիական հասարակության և պետական կառույցների ներկայացուցիչներին: Ավելին իմանալու համար այցելե՛ք` <http://crm.aua.am>:

## Ինչպես հղում անել այս զեկույցին

Ջենաշի, Մ. (2015): Հայաստանի հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմի վերլուծություն, Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն, ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն: Հայաստանի ամերիկյան համալսարան (Երևան, Հայաստան): Ներբեռնված է հետևյալ էլ. հասցեից` <http://mlri.crm.aua.am>:

# I. Ներածություն

Սույն աշխատանքային փաստաթղթում նախատեսվում է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում օգտակար հանածոների արդյունահանման մասով գործող ֆիսկալ (հարկային) ռեժիմը, և այն քննարկման հիմք է հանդիսանալու քաղաքականության և օրենսդրության նախատեսվող բարեփոխումների շուրջ տարվող քննարկումների համատեքստում, որի առանցքը Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական և հարկային համակարգի կառուցվածքն է: Փաստաթղթի II մասը սկսվում է հանքարդյունաբերության ոլորտի հարկման գլխավոր սկզբունքների հակիրճ քննարկմամբ, այդ թվում՝ հիմնական եզրույթների և հասկացությունների, կառավարության սահմանած նպատակների և հայեցակարգային մոտեցումների, ինչպես նաև միջազգային ֆիսկալ կարգավորումների ընդհանուր դիտարկում: Փաստաթղթի III մասը պարունակում է Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ամփոփ ակնարկ, իսկ IV մասը՝ Հայաստանի ֆիսկալ ռեժիմի հանգամանալից նկարագրություն, որտեղ նշված են հիմնական տարրերը և հաշվարկի մեթոդները, ինչպես նաև հետագա ուսումնասիրության համար առանձնացվել են խնդրահարույց մասերը: IV մասում բերված ֆիսկալ ռեժիմի նկարագրությունը հիմք է ծառայում հաջորդիվ ներկայացված իրավական և տնտեսական վերլուծության համար: V մասում Հայաստանի ֆիսկալ ռեժիմը համեմատվել է միջազգային փորձի հետ, ինչպես նաև ներկայացվել է իրավական և տնտեսական վերլուծություն:<sup>1</sup> Վերլուծության մեջ ուշադրություն է դարձվում ֆիսկալ ռեժիմի հիմնական բաղադրիչներից յուրաքանչյուրին: Սողելավորման հիմքում ընկած է Ադյուսակ 2-ում բերված ենթադրությունների շարքը, իսկ համեմատության համար օգտագործված ֆիսկալ ռեժիմների նկարագրությունը բերված է Հավելված 2-ում: Վերլուծությունը եզրափակում են ամփոփ առաջարկությունները(մասVI):

---

<sup>1</sup>Սույն հաշվետվությունը կազմվել է Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնության (ՀՕԲՆ) պատվերով, որը ՀԱՀ պատասխանատու հանքարդյունաբերություն կենտրոնի ծրագիր է՝ Հայաստանի հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմի քննարկման համար անհրաժեշտ տեղեկատվություն ապահովելու նպատակով: Հեղինակը իրավաբան է և քաղաքականության վերլուծաբան, որը մասնագիտացել է արդյունահանվող պաշարների հարկման գծով: Հեղինակը չունի Հայաստանում փաստաբանական պրակտիկայով զբաղվելու լիցենզիա և չունի ՀՀ օրենսդրության կամ հանքարդյունաբերության ոլորտի մասով հատուկ փորձ: Այդ իսկ պատճառով սույն հաշվետվության հիմքում ընկած են ընդհանուր քաղաքականության սկզբունքները և հեղինակի՝ բազմաթիվ երկրներում ընդհանուր և մասնավորապես արդյունաբերության ոլորտի հարկաբյուջետային քաղաքականության մասով ունեցած փորձը, այս հաշվետվության ոչ մի մաս չպետք է դիտել որպես իրավական խորհրդատվություն, և հեղինակը որևէ պատասխանատվություն չի կրում սույն վերլուծությունը որևէ իրավական (օրենսդրական կամ այլ) նպատակով հիմք ընդունելու համար: Վերլուծության համար հիմք է հանդիսացել սույն փաստաթղթում ներկայացված ֆիսկալ ռեժիմը, որը պատրաստվել է MLRI-ի օժանդակությամբ և օգտվելով տարբեր առաջնային և երկրորդական աղբյուրներից, համապատասխան օրենքները նկարագրելիս անդրադարձ չի արվել դրանցում տեղ գտած թերություններին կամ բացթողումներին, որոնցից յուրաքանչյուրը կարող է ազդեցություն ունենալ սույն հաշվետվության մեջ ներկայացված եզրակացությունների վրա: Սույն աշխատանքային փաստաթղթում բերված կարծիքները բացառապես հեղինակին են և որևէ կերպ չպետք է ասոցացվեն ՀՕԲՆ-ի հետ՝ առանց վերջինիս ամփոփական համաձայնության: Հեղինակը սույն փաստաթղթի կազմման շրջանակներից դուրս որևէ առնչություն չունի ՀՕԲՆ-ի հետ և ուղղակիորեն տեղյակ չէ սույն հաշվետվության մեջ արձարծված հարցերի կամ Հայաստանի հանքարդյունաբերության քաղաքականության շուրջ ՀՕԲՆ-ի կարծիքից:

## II. Հանքարդյունաբերության ֆիսկալ Ռեժիմներ

«Հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմներ» եզրույթը վերաբերում է օգտակար հանածոներ արդյունահանող երկրներում կիրառվող մի շարք գործիքներին, որոնցով որոշվում է, թե հանքարդյունաբերական, նախագծերից ստացվող եկամուտներն ինչպես են բաշխվում պետության և ներդրողների միջև: «Հարկային ռեժիմ» եզրույթը ևս կարող է զուգահեռ օգտագործվել, թեև դա կարող է շփոթություն առաջացնել, քանի որ ֆիսկալ ռեժիմի որոշակի տարրեր իրական հարկեր չեն (օրինակ, ռոյալթիներ) և չպետք է վերլուծության ենթարկվեն որպես այդպիսին: Սույն փաստաթղթի II Մասում ընդհանուր ներկայացված են համաշխարհային հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմների հիմքում ընկած սկզբունքները և այդ ռեժիմներին բնորոշ ընդհանուր տարրերը:

### Հանքահումքի Հարկման Սկզբունքները

Ցանկացած երկրի զարգացման հեռանկարի վրա մեծ կամ էական ազդեցություն կարող է ունենալ այն հանգամանքը, թե տվյալ երկիրն ինչպես է կառավարում իր հանքային ռեսուրսները: Հանքարդյունաբերության ոլորտում պոտենցիալ բարձր վարձավճարների<sup>2</sup> առկայությունը ենթադրում է, որ բնական պաշարների սեփականատիրոջ (պետության) ֆինանսական եկամուտները կարող են հեղափոխական ծավալների հասնել: Թեև հանքարդյունաբերությունը կարող է բերել էական ոչ ֆինանսական օգուտներ ևս (օրինակ, զբաղվածություն, ենթակառուցվածքների բարելավում, հանքարդյունաբերության և տնտեսության այլ սեգմենտների միջև կապ և այլն), այդուամենայնիվ, շատ երկրներում հանքարդյունաբերության ոլորտից ստացվող ամենամեծ պոտենցիալ օգուտը բնական պաշարների տիրապետումից և օգտագործումից ստացվող եկամուտներն են:

Բնօգտագործման վարձավճարները կարող են էականորեն տարբեր լինել տարբեր նախագծերի ու հանքանյութերի համար, իսկ դրանք /ինչպիսի գնահատումը/գնահատելը՝ դժվար: Որպես հարկային քաղաքականության սկզբունք, նախընտրելի են ոչ թե ռեգրեսիվ, այլ ընդհանուր առմամբ պրոգրեսիվ ֆիսկալ ռեժիմները, ինչը ենթադրում է պետության ավելի մեծ եկամտի ապահովում՝ ավելի բարձր շահույթի պայմաններում: Ռեգրեսիվ ֆիսկալ ռեժիմները չափազանց մեծ բեռ կարող են առաջադրել ցածր շահույթ ունեցող նախագծերին՝ այս կերպ, հնարավոր է, կանխելով առաջխաղացումը: Դրանք նաև կարող են բերել քաղաքական առումով անընդունելի *հատույցների* կառավարության համար՝ բարձր շահութաբերության ժամանակաշրջաններում: Կարևոր է նկատել, որ գրեթե բոլոր ֆիսկալ ռեժիմների կառուցվածքում համադրված են պրոգրեսիվ և ռեգրեսիվ գործիքները, և ռեգրեսիվ գործիքներից որոշների կիրառմանը կողմ փաստարկներ կան. այդ իսկ

<sup>2</sup>«Տնտեսական վարձավճարը» վերաբերում է ավելցուկային այն արժեքին, որը մտնում է արտադրական ծախսերը հանելուց և շրջանառու միջոցների դիմաց նվազագույն հատույցը վճարելուց հետո:

պատճառով լավագույն տարբերակը ֆիսկալ ռեժիմին՝ որպես մեկ ամբողջություն, գնահատական տալն է:

Հանքային ռեսուրսների կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանք սահմանափակ են և սպառվող: Հանքային ռեսուրսների արդյունահանումը հանդիսանում է արժեքավոր ակտիվների մշտական կորուստ. եթե այս նվազեցումը համարժեքորեն չհաշվանցվի ֆինանսական և այլ օգուտների միջոցով, ապա հանքարդյունաբերությունը կարող է բերել ազգային հարստության իրական կրճատման: Ֆիսկալ ռեժիմի կառուցվածքը որոշելիս նշանակություն է ունենում բնական պաշարների մարման ենթակա լինելու հանգամանքը: Օրինակ, բացառապես շահույթի բաղադրիչով պայմանավորված մեխանիզմների վրա հիմնվելը, ինչը համապատասխանում է պրոգրեսիվ ռեժիմի նպատակներին, տեսականորեն կարող է հանգեցնել հանքային հարստության մշտական կորստի, որի դիմաց վճարներ չեն վճարվում, կամ այդ վճարները փոքր են՝ ցածր շահույթի պայմաններում: Այդ իսկ պատճառով գրեթե բոլոր երկրները նախընտրում են տարբեր ֆիսկալ գործիքների որոշակի համադրությունը:

Լավ կառուցված ֆիսկալ ռեժիմը պետք է նպաստի պետական քաղաքականության ինդիկսների իրականացմանը: Եթե քաղաքականության առաջնային ինդիք է համարվում բյուջեի եկամուտների մոբիլիզացումը, ապա ֆիսկալ ռեժիմները պետք է ուղղված լինեն ռեսուրսի տրամադրման դիմաց կառավարության եկամուտների ապահովմանը: Անշուշտ, բյուջեի եկամուտների մոբիլիզացումը կարող է և ճիշտ հավասարակշռված լինել այլ նպատակների հետ, ինչպես օրինակ՝ վերամշակող տեղական ընկերությունների զարգացման խրախուսումը կամ տնտեսական միաձուլումներից օգուտներ քաղելը տեղական մակարդակում զբաղվածության և գնումների ծավալների աճի միջոցով, կամ հանքավայրերի շահագործման խրախուսումը՝ այն հույսով, որ կարճ ժամկետում չստացված եկամուտները կհատուցվեն ապագայում՝ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման արդյունքում ստացված ավելի մեծ եկամուտներից: Կառավարության կողմից այս և այլ նպատակներին հետամուտ լինելը տրամաբանված է, այդուհանդերձ, որոշակի զգոնություն պետք է ցուցաբերել ֆիսկալ ռեժիմները վերլուծելիս՝ դրանց շնորհիվ ապահովվող բյուջեի եկամուտների տեսանկյունից:

Որոշ երկրներ տարբեր ժամանակներում սեփական ուժերով են արդյունահանել իրենց ունեցած կոշտ հանքաքարի պաշարները, մինչդեռ որոշ երկրներ էլ մասնավոր հատվածի ներդրողներին են դիմել ընդերքի պաշարները արդյունավետ հանքավայրերի վերածելու համար՝ անհրաժեշտ տեխնիկական գիտելիքների և կապիտալի ներգրավման համար: Այդ իսկ պատճառով, ֆիսկալ ռեժիմները պարտադիր պետք է ապահովեն կառավարության եկամուտների ներկայիս արժեքը առավելագույնի հասցնելու և ներդրողների համար բավարար տնտեսական խթաններ ապահովելու միջև հավավասարակշռությունը:

Հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմների առնչությամբ ներդրողների առանցքային մտահոգությունը վերաբերում է *Ժամանակային հաջորդականության* հիմնախնդրին: Հանքարդյունաբերական նախագծերը տեղային են և կարող են շատ երկարատև լինել: Այդ իսկ պատճառով, հնարավոր է, որ առանձին կառավարություններ որոշում կայացնեն նշանակալի հարկային զեղչեր առաջարկել ներդրումներ գրավելու նպատակով, բայց ներդրումները կատարելուց անմիջապես հետո ներդրողներին կարող են այլ խթաններ առաջարկվել առկա պայմանները վերանայելու համար՝ դրանք պետության համար ավելի նպաստավոր դարձնելու նպատակով: Ներդրողները գիտակցում են այս փոփոխական խթանների ազդեցությունը և փորձում են դրանցից պաշտպանվել տարբեր եղանակներով (օրինակ, կայուն ֆիսկալ ռեժիմի նախատեսում պայմանագրում): Նրանք նաև նախընտրում են այնպիսի ռեժիմներ, որոնք կկրճատեն ներդրումային կապիտալի հատույցին նախորդող ժամանակաշրջանը: Ընդհանուր առմամբ, ֆիսկալ ռեժիմները կառուցվում են այնպես, որ նվազագույնի հասցվի որևէ կողմի՝ վերաբանակցելու շահագրգռվածությունը, օրինակ, ի պատասխան փոփոխվող իրավիճակին, ինչը սովորաբար ձեռնտու է թե՛ ներդրողին և թե՛ պետությանը: Փոփոխվող իրավիճակին արձագանքելու գաղափարը հատկապես կարևոր է հանքարդյունաբերության մեջ, որովհետև այս ոլորտին հատուկ է բարձր աստիճանի անորոշությունը, այդ թվում, օգտակար հանածոների գների, հանքային պաշարների և երկրաբանական, արտադրական ծախսերի հետ կապված անորոշությունը, ինչպես նաև քաղաքական ռիսկերը:

Հարուստ հանքային պաշարներ ունեցող երկրները ունեն եական տարբերություններ, որոնք իրենց ազդեցությունն են ունենում ֆիսկալ քաղաքականության վրա: Հանքարդյունաբերության ոլորտի եկամտաբերությունից մեծ կախում ունեցող երկրների առաջնահերթությունները տարբերվում են առավել դիվերսիֆիկացված տնտեսություն ունեցող երկրների առաջնահերթություններից: Անորոշ բնական պաշարների բազա, ծախսային կառուցվածք կամ քաղաքական իրավիճակ ունեցող երկրները, միգուցե, ստիպված լինեն իրենց ֆիսկալ ռեժիմները հարմարեցնել այնպես, որ կարողանան հաջողությամբ մրցակցել սահմանափակ ներդրումային միջոցների համար:

Հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմի մեկ այլ կարևոր առանձնահատկություն է այն, թե որքանով է այն արդյունավետ՝ վարչարարություն իրականացնելիս, և այդ իսկ պատճառով, հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմի կառուցվածքը որոշելիս առանցքային է պարզության սկզբունքը: Նույնիսկ հանքարդյունաբերության ամենահաջող ֆիսկալ ռեժիմները յուրօրինակ դժվարություն են պարունակում հարկային վարչարարություն իրականացնելու համար, հատկապես այն դեպքում, որ որոշ ֆիսկալ վճարներ, ըստ էության, ավելի դժվար են կառավարվում, քան մյուսները:

Այս ամբողջական համակարգի մի կողմում ընդերքի օգտագործման դիմաց մեկանգամյա վճարներն են, որոնք ամենադյուրինն են վարչարարություն իրականացնելու առումով, դրանց հաջորդում են ծավալային վճարները (օրինակ, որոշակի հաստատագրված վճար մեկ տոննա արտադրանքի համար, այլ ոչ թե արժեքային (ադվալորային) վճար): *Արժեքային* ռոյալթիները ևս համարվում են դյուրին կիրառվող վճարներ, մասնավորապես եթե դրանց հիմքում ընկած են հրապարակված գները, և դրանք չեն պահանջում ծախսերի լուրջ հաշվառում: Ամենաբարդ վճարները շահույթի և կանխիկի հոսքերի վրա հիմնված տարբեր հարկատեսակներն են, քանի որ թե՛ եկամուտները և թե՛ ծախսերը չափելը բազմաթիվ բարդություններ է ենթադրում: Անշուշտ, հեշտ կառավարվող վճարները նաև ամենառեգրեսիվներն են, այնպես որ հարկ է գտնել ճիշտ բալանսը: Պարզության ընդհանուր սկզբունքը թելադրում է, որ ֆիսկալ ռեժիմը չպետք է լինի ավելի բարդ, քան անհրաժեշտ է դրա առջև դրված խնդիրների իրականացման համար: Այն պետք է օգտակար լինի թե՛ կառավարությանը և թե՛ ներդրողներին, ում համար բացասական ազդեցություն կարող են ունենալ հարկային օրենսդրության պահանջների կատարման ծախսերը և անարդյունավետ վարչարարությունը:

Վերջին տարիներին քաղաքական շրջանակներում որոշ քննարկումներ են տեղ գտել այն հարցի առնչությամբ, թե որքանով է տեղին շահույթի և վարձակալության վրա հիմնված խիստ պրոգրեսիվ հարկերի կիրառումը այնպիսի երկրներում, որտեղ հարկային վարչարարության կարողությունը սահմանափակ է՝ հաշվի առնելով այս գործիքների կիրառման հետ կապված դժվարությունները: Դժվար կառավարելիությունը ինքնին չպետք է հիմք հանդիսանա այդօրինակ հարկերի դուրս մղման համար, սակայն աշխատանքներ պետք է տարվեն այս դժվարությունները հնարավորինս նվազագույնի հասցնելու և ըստ անհրաժեշտության վարչարարության կարողությունը զարգացնելու համար:

#### Ընդհանուր Տարրերի Նկարագրություն

**Ռոյալթիներ.** Ռոյալթին ռեսուրսի սեփականատիրոջ (սովորաբար՝ պետության) կողմից՝ օգտակար հանածոների արդյունահանման դիմաց սահմանվող վճար է: Ռոյալթիները կարող են գանձվել արժեքային (*տոկոսային*) հիմունքով (որպես արժեքի տոկոսային մաս) կամ *միավորային հիմունքով* (միավոր կշռի կամ ծավալի համար սահմանված վճար): Ադվալորային ռոյալթիները ամենատարածված վճարներն են բոլոր ապրանքային խմբերի համար, բացառությամբ շատ ցածրարժեք ապրանքային խմբերի: Հանքարդյունաբերություն ունեցող գրեթե բոլոր երկրներում սահմանվում են ռոյալթիի որոշակի ձև, թեև մի շարք երկրներ կիրառում են այսպես կոչված «շահույթի վրա հիմնված ռոյալթիներ», որոնք կարող են և կոչվել ռոյալթիներ, սակայն ըստ էության հանդես են գալիս որպես լրացուցիչ հարկեր շահույթի որոշակի հաշվարկի նկատմամբ:

Ռոյալթիի (կամ ցանկացած ֆիսկալ գործիքի) երկու բաղադրիչներ են դրույթաչափը և բազան, օրինակ հարկվող օբյեկտը, հարկման բազան: Օգտակար հանածոների դեպքում արժեքային (ադվալորեմային) ռոյալթիի դրույթաչափը որպես կանոն 0-9%-ի միջակայքում է:<sup>3</sup> Տարբեր երկրներում կիրառվող դրույթաչափերը համեմատելիս հարկ է զգույշ լինել նաև այն պատճառով, որ ռոյալթիի հաշվարկման հիմքը ևս կարևոր դեր ունի, իսկ ռոյալթիի հաշվարկման հիմքերը էականորեն են տարբերվում են: Օրինակ, որևէ երկրում կիրառվող 4% ռոյալթին, որը սահմանված է ծուլարանի զուտ հասույթի հիմքի վրա, շատ ավելի քիչ կլինի, քան այն երկրում կիրառվող 4% ռոյալթին, որը սահմանված է հանքաքարի մետաղական պարունակության արժեքի հիմքի հիման վրա՝ հաշվարկված միջազգային կողմնորոշիչ գներով: Սրա պատճառն այն է, որ ծուլարանի զուտ հասույթում ֆրեզերային և մետաղաձուլական կորուստները հանված են ռոյալթիի հիմքից, մինչդեռ հանքավայրումարժեքի գնահատման պարագայում դա այդպես չէ: Գործնականում նկատվում են ռոյալթիի հաշվարկման այլ հիմքեր: Որոշ երկրներ ռոյալթիները գնահատում են հանածոների իրացման պայմանագրային գների հիման վրա, իսկ որոշներն օգտվում են միջազգային կողմնորոշիչ գներից, որոնք կարող են էականորեն տարբերվել փաստացի գներից: Կան նաև երկրներ, որոնք նախատեսում են տրանսպորտային, սպասարկման, բեռնափոխադրման և այլ ծախսերի հանումը իրացման ընդհանուր շրջանառությունից: Միշտ չէ, որ միանշանակ ճիշտ է այն հիմքը, որի հիման վրա պետությունը գնահատում է ռոյալթիները, քանի որ հաճախ օգտագործվում է ոչ ճշգրիտ մեթոդաբանություն: Այդ իսկ պատճառով կարևոր է հանգամանալից ուշադրություն դարձնել առանձին բաղադրիչներին: Ինչպես նշվել է վերը, որոշ երկրներ «ռոյալթիները» գնահատում են ոչ միայն արդյունահանված հանածոների արժեքի, այլ նաև շահույթի որոշակի բաղադրիչի հիման վրա: Նման դեպքում ռոյալթիի բազան կարող է բավականին նման լինել եկամտային հարկի կամ շահութահարկի հարկման հիմքին (որն, անշուշտ, կարող է զրո լինել որոշ հանգամանքներում):

Որոշ երկրներ, ինչպես օրինակ, Հայաստանը, Պերուն և Հարավային Աֆրիկան, կիրառում են ռոյալթիի փոփոխական դրույթաչափ, երբ ռոյալթիի դրույթաչափն աճում է՝ պայմանավորված որևէ այլ գործոնով (օրինակ, հանքահումքի գներ կամ ձեռնարկության շահութաբերության գործակիցներ): Փոփոխական դրույթաչափով ռոյալթիները սովորաբար ընկալվում են որպես արդյունահանվող օգտակար հանածոյի արժեքից ավելի մեծ մասնաբաժին ապահովելու միջոց՝ օգտակար հանածոյի գնի և/կամ ընկերության շահութաբերության աճին զուգահեռ: Այս առումով այդ գործառույթը նման է պաշարի

<sup>3</sup>«Շահույթի վրա հիմնված» ռոյալթիների դրույթաչափերը ավելի բարձր են, սակայն քանի որ այդ ռոյալթիների բազան հիմքը սովորաբար ավելի ցածր է, հետևաբար այդ ռոյալթիների դրույթաբաժնի ուղղակի համեմատությունը՝ իրական արժեքային ռոյալթիների դրույթաչափերի նկատմամբ իրատեսական չէ:



վարձակալական վճարի կամ այլ անսպասելի շահույթի նկատմամբ կիրառվող հարկերի գործառույթին, թեև կան մի քանի կարևոր տարբերություններ (բերված են ստորև):

Ռոյալթիների՝ հանքարդյունաբերության ոլորտի գրեթե բոլոր ֆիսկալ ռեժիմների կարևոր մաս հանդիսանալու պատճառներից է այն, որ դրանց կիրառման վարչարարությունը որպես կանոն ավելի ոյուրին է, քան շահույթի վրա հիմնված այլ ֆիսկալ գործիքների պարագայում: Ընկերության՝ ռոյալթիի հիմքը կեղծելու հնարավորությունը, մասնավորապես երբ ռոյալթիների հիմքում ընկած են միջազգային կողմնորոշիչ գները, զգալիորեն ավելի փոքր է, քան հարկման ենթակա եկամուտների հաշվետվությունների պարագայում: Ռոյալթիների այս համեմատական առավելությունը, անշուշտ, նվազում է, եթե ռոյալթիի հաշվարկը կախված է գլխավորապես շահույթի չափից և ծախսերի հաշվեգրումից՝ ռոյալթիի հիմքի հաշվարկման համար, կամ ռոյալթիի դրույթաչափից՝ փոփոխական դրույթաչափով ռոյալթիի հաշվարկման համար: Կառավարության համար ռոյալթիի կիրառման առավելություններից է այն, որ դրանք սովորաբար վճարվում են արտադրության մեկնարկման պահից, մինչդեռ շահույթի վրա հիմնված տարրերը, հնարավոր է, չվճարվեն տարիներ շարունակ:

**Եկամտային հարկեր.** Շահութահարկեր («եկամտահարկ» և «շահութահարկ» հասկացությունները չպետք է ընկալել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իմաստներով) կիրառվում են բոլոր երկրներում և այդ թվում՝ հանքարդյունաբերության ոլորտում: Սովորաբար կիրառվող եկամտային հարկը ֆիսկալ ռեժիմի կարևոր տարր է հանքարդյունաբերական արտադրություն ունեցող շատ երկրների համար, թեև որոշ պետություններ նախատեսում են կոնկրետ այս ոլորտը կարգավորող դրույթներ, որոնք հնարավոր է փոխեն հանքարդյունաբերության ոլորտի նկատմամբ ընդհանուր պահանջների կիրառումը: Ինչպես և ռոյալթիների դեպքում է, եկամտային հարկավճարները կախված են ինչպես հարկային դրույթաչափից, այնպես էլ հարկման բազայի (այսինքն՝ հարկման ենթակա եկամտի) որոշման կանոններից: Հարկման ենթակա եկամտի հաշվարկի կանոնները կարող են չափազանց բարդ լինել, իսկ հարկային համակարգի համապատասխան բոլոր տարրերի նկարագրությունը՝ սույն աշխատության շրջանակներից դուրս է, սակայն մի քանի առանցքային բաղադրիչներ, որոնք վերաբերում են հանքարդյունաբերության ոլորտին, նկարագրված են ստորև.

- (i) **Հանքավայրի հետախուզման և շահագործման նախապատրաստական աշխատանքների ծախսերի կառավարումը.** Շատ երկրներում պահանջվում է, որպեսզի նախաարտադրական ծախսերը խմբավորվեն և ամորտիզացվեն որոշակի ժամանակահատվածի ընթացքում, ինչը նշանակում է, որ հետախուզման և հանքավայրի շահագործման նախապատրաստական աշխատանքների մասով ծախսերը անմիջապես չեն հաշվեգրվում եկամուտից, այլ փոխարենը՝ պահանջվում

են աստիճանաբար: Կան երկրներ, որտեղ նախատեսվում է անհապաղ հաշվանցում՝ ծախսերին զուգահեռ: Անհապաղ հաշվանցումը կամ խիստ արագացված ամորտիզացիան կարող է խթանիչ գործոն հանդիսանալ ընկերությունների համար՝ ներդրումներ կատարելու, քանի որ նրանք նախագծերի իրականացման սկզբնական տարիներին կարողանում են զգալիորեն նվազեցնել հարկերը: Գլխավոր հարցը ժամանակի ընտրությունն է (թեև որոշ երկրներ նաև առաջարկում են հանքավայրի շահագործման նախապատրաստական ծախսերի մասով «բարձրացում», ինչը հանգեցնում է ավելի քան 100% նվազեցումների, որպես լրացուցիչ խթան):<sup>4</sup>

- (ii) **Թույլ կանոններ.** Տոկոսագումարի մասով ծախսերը սովորաբար համարվում են նվազեցնելի եկամտային հարկի համակարգում: Գերազանցապես փոխառու կապիտալի ներգրավվմամբ ֆինանսավորվող նախագծերի պարագայում, ինչպիսիք են շատ հանքարդյունաբերական նախագծերը, որտեղ տոկոսագումարների նվազեցումները կարող են էականորեն պակասեցնել հարկման ենթակա բազան: Նույնիսկ 100%-ով մայր ընկերության սեփական միջոցների հաշվին ֆինանսավորվող նախագծերի պարագայում (օրինակ, երբ արտաքին փոխառու միջոցներ ներգրավված չեն), օտարերկրյա մայր ընկերությունը կարող է նախընտրել իր կողմից կատարվող ներդրումը տեղական դուստր ձեռնարկության վրա դնել որպես փոխառություն /պարտք/, այլ ոչ որպես սեփական կապիտալ՝ հարկերը փոքրացնելու նպատակով: Նման մարտավարությունների միջոցով հարկի չափազանց նվազեցումը կանխարգելելու նպատակով գրեթե բոլոր երկրներում կիրառվում են «թույլ միջոցավորման կանոններ» նվազեցվող տոկոսագումարը սահմանափակելու նպատակով: Այս կանոնները սովորաբար նախատեսում են տոկոսագումարի առավելագույն սահմանաչափ, գերակշռող դրույթաչափերի որոշակի ցուցանիշի հիման վրա, և կարող են նաև սահմանել պարտքի գումարի առավելագույն սահմանաչափ, որի մասով ընկերությունը իրավունք կունենա հայցելու տոկոսագումարի նվազեցումներ՝ հաշվարկված որպես ընդհանուր ակտիվների կամ սեփական միջոցների որոշակի տոկոսային մաս: Որպես այլընտրանքային տարբերակ, թույլ միջոցավորման կանոնների կիրառմամբ՝ կարելի է պակասեցվող տոկոսադրույթի ընդհանուր գումարը սահմանափակել<sup>5</sup>:

<sup>4</sup>Նախարարտարական ծախսումների ձևակերպման հարցում մեկ այլ հնարավոր տարբերություն նկատվում է այդ ծախսերի մաշվածքագումը սկսելիս: Որոշ երկրներում մաշվածքագումը թույլ է տրվում սկսել ծախսումների կատարման տարում, իսկ որոշ երկրներում սահմանված է, որ մաշվածքագումը պետք է սկսել արտադրության առաջին տարում: Երկարատև նախապատրաստական նփույների դեպքում խոշոր վնասների կուտակում թույլատրելի կարող է էական բացասական ազդեցություն ունենալ բյուջեի եկամուտների վրա: Այդ իսկ պատճառով լավագույն գործելակերպն է նվազեցումները արտադրության մեկնարկի պահից սկսելը (և կիրառել մասնակի տարվա կանոնը, որպեսզի հնարավոր չլինի մեկ յարժեք տարվա նվազեցումները պահանջել արտադրության ընդամենը մ իբանի ամսվա համար):

<sup>5</sup> ՏՀԶԿ վերջերս լույս տեսած՝ տոկոսային նվազեցումների տարանջատմամբ հաշվարկվող հարկման բազան սահմանափակելու մասին ուղեցույցն առաջարկում է կիրառել EBITDA-ի (եկամուտը՝ նախքան տոկոսները, հարկերը վճարելը, մաշվածությունը և ամորտիզացիան) նկատմամբ կիրառել զուտ տոկոսային եկամուտների կողմնորոշիչ գործակից:

**(iii) Բացասական տարբերության (վնասների) փոխանցում հաջորդող ժամանակաշրջանի հաշվեկշռի հաշվին.** Եկամտային հարկով հարկման ընդհանուր սկզբունք է հարկման ենթակա եկամուտը որոշելու նպատակով թույլատրելի ծախսերը եկամուտից հանելը: Եթե տվյալ տարում ծախսերը գերազանցում են եկամուտներին, ապա նորման գերազանցած ծախսերը փոխանցվում են հաջորդող ժամանակաշրջանի հաշվեկշռի հաշվին (որոշ երկրներում նաև թույլ է տրվում փոխանցել նախորդ ժամանակաշրջան)՝ ապագա եկամուտները հաշվանցելու համար, քանի դեռ նրանք ամբողջությամբ օգտագործված չեն: Շատ երկրներում նախատեսված են հաջորդող ժամանակաշրջանի հաշվեկշռի հաշվին փոխանցվող բացասական տարբերության առավելագույն սահմանաչափի նորմեր, և այդ տարբեր նորմերը սովորաբար վերաբերում են նաև հանքարդյունաբերության ոլորտին:

**(iv) Ակտիվների առանձնացում.** Ակտիվների առանձնացումը վերաբերում է հարկման նորմերի կիրառմանը առանձին լիցենզիաների հիման վրա, որի արդյունքում մեկ հանքարդյունաբերական նախագծին վերագրված ծախսերը չեն օգտագործվում մեկ այլ նախագծից ստացված շահույթերի հաշվանցման համար, ինչը թույլատրելի կլիներ այն դեպքերում, երբ հարկերը հաշվարկվեին համախմբված խմբային հիմունքով: Քաղաքականությամբ պայմանավորված՝ համախմբված հարկումը կարող է և տրամաբանված լինել (օրինակ, այն կարող է խրախուսել տվյալ երկրներում արդեն իսկ գործունեություն ծավալած հանքարդյունաբերական ընկերություններին ներդրումներ կատարել հանքավայրի հետագա հետախուզական աշխատանքներում), սակայն քանի որ դրա հետևանքով տարժամկետվում է եկամտային հարկերի վճարումը շահութաբեր հանքավայրերի մասով, հետևաբար շատ երկրներ նախընտրել են յուրաքանչյուր հանքարդյունաբերական նախագիծ հարկել որպես հարկման ենթակա առանձին միավոր՝ յուրաքանչյուր գործառնությունը «առանձնացնելու» նպատակով:

**(v) Պատնեշում.** Հանքարդյունաբերական ընկերությունները կարող են հեջավորման գործարքներ իրականացնել իրենց կամ ներդրողներին՝ նախագիծը սկսելուց հետո ապրանքային խմբի գնային փոփոխություններից պաշտպանելու նպատակով: Նրանք, օրինակ, կարող են մասնակի կամ ամբողջությամբ վաճառել իրենց արտադրած ոսկու ծավալը, և հանքարդյունաբերումն իրականացնել երկարաժամկետ պայմանագրերին համապատասխան, որտեղ գները ֆիքսված են ծրագրի ֆինանսավորման ստացման պահի դրությամբ գործող գների հիման վրա: Եթե այդ ընթացքում գները բարձրանում են, ապա թե՛ ռոյալթիները և թե՛ եկամտային հարկերը կարող են նվազել՝ հատուկ դրույթների բացակայության պայմաններում: Հեջավորումը կարող է ընկերության համար առաջացնել հարկման

ենթակա մուտքեր կամ վնասներ, սակայն գլոբալ մակարդակում գործունեություն իրականացնող ընկերությունները կարողանում են ավելի մեծ աստիճանի վերահսկողություն իրականացնել առ այն, թե հարկման նպատակով այս մուտքերը կամ վնասները որտեղ տեղ կգտնեն (օրինակ, նրանք կարող են հեջ-ֆոնդերը հաշվանցել այլ երկրներում): Հարուստ հանքային պաշարներ ունեցող որոշ երկրներ, այդ իսկ պատճառով, նախընտրում են հարկերի և ռոյալթիների հաշվարկման համար կիրառել հսկիչ գներ (ըստ եուրոյան հաշվի չառնելով վերը բերված օրինակի՝ երկարաժամկետ պայմանագրային գինը) և հեջավորման արդյունքում ստացված մուտքերը կամ կորուստները դիտարկելով որպես ոչ հանքարդյունաբերական գործունեությունից ստացված եկամուտներ և կարուստներ:

**(vi) Թույլատրելի նվազեցումներ.** Կարևոր է, որ հարկային համակարգերում սահմանված լինեն հստակ դրույթներ առ այն, թե որ ծախսերն են թույլատրվում անմիջապես նվազեցնել և որոնք են, որ պետք է մաշված քաղաքական ժամանակի ընթացքում: Հարկի նվազեցնելիությունը այլ ֆիսկալ վճարումներից ևս պետք է հստակ լինի: Որոշ երկրներում հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմների շուրջ քննարկումների թեման ռոյալթիների նվազեցնելիությունն է, որտեղ քաղաքացիական կազմակերպությունները և այլոք որոշ դեպքերում պնդում են, որ ճիշտ չէ ընկերություններին թույլ տալ նվազեցնելու ռոյալթիները հարկման ենթակա եկամուտներից, քանի որ դա նվազեցնում է հարկերը, որոնք հակառակ պարագայում պետք է վճարվեին: Ըստ եուրոյան, գրեթե բոլոր երկրները թույլատրում են, որպեսզի ռոյալթիների կիրառումը, ինչպես նաև որոշ այլ ֆիսկալ վճարումներ նվազեցվեն եկամուտներից և սա ընդհանուր առմամբ նպատակահարմար չի համարվում տնտեսական առումով: Իսկապես, ֆիսկալ ռեժիմի բոլոր տարրերը էականորեն փոխկապակցված են, և կարևոր է համակարգի լավ աշխատանքը՝ որպես ամբողջություն, այլ ոչ թե առանձին տարրերը առավելագույնի հասցնելը:

**Վարձակալության հարկեր և գերշահույթի հարկեր.** Ի լրումն հարկերի և ռոյալթիների, ֆիսկալ ռեժիմը կարող է նախատեսել նաև որոշ հարկատեսակներ գերշահույթի, անսպասելի շահույթի կամ վարձակալության համար: Դրանք իրենց ձևով և ազդեցությամբ կարող են զգալիորեն տարբերվել միմյանցից: Ինչպես ներկայացվել է Հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմների սկզբունքների քննարկման մասում, հանքարդյունաբերության առանձնահատկությունը *վարձավճարների* առկայությունն է: Տեսականորեն, այս վարձավճարները, որոնք սահմանվում են որպես հանքարդյունաբերության ծախսերը գերազանցող հատույցներ՝ ներառյալ ներդրումների մասով պահանջվող հատույցը, կարող են ամբողջությամբ հարկվել՝ առանց ներդրման վրա որևէ ներգործության: Գործնականում դա անելը գրեթե անհնար է՝ հաշվի առնելով վարձավճարի գնահատման հետ կապված անորոշությունը, այդ իսկ պատճառով հարկերի

մեծ մասը նախատեսում է այդ վարձավճարների միայն մի մասի ներառումը, այնքանով որքանով դրանք հնարավոր է գնահատել: Նավթային ոլորտում տարածված կիրառում ունեցող հարկ է ռեսուրսի վարձակալության հարկը (ՌՎՀ), որը կիրառական է նաև որոշ երկրների այլ բնական ռեսուրսների ընդերթօգտագործման ոլորտում: ՌՎՀ-ը չափում է նախագծի տարեկան դրամական հոսքերը<sup>6</sup> և հարկում է այդ դրամական հոսքերը՝ ծախսածածկման հատուցադրույթին հասնելուց հետո: Սրա հաշվապահական հաշվառումը մի փոքր այլ եղանակով է իրականացվում, քան եկամտային հարկինը (օրինակ, որպես կանոն չի թույլատրվում տոկոսագումարի ծախսը, իսկ կապիտալ ծախսերը հաշվարկվում են դրանց առաջացման, այլ ոչ թե մաշվածքագրման տարում), սակայն սկզբունքները համադրելի են: Որոշ երկրներ փոխարենը նախընտրել են վարձավճարները ներառել փոփոխական դրույթաչափով ռոյալթիներում կամ պրոգրեսիվ եկամտային հարկի դրույթաչափերում:

**Պահումային հարկեր.** Պահումային հարկը առանձին հարկատեսակ չէ, այլ՝ եկամուտների դիմաց հարկեր հավաքագրելու եղանակ: Ենթակապալառուներին վճարումներ կատարող հանքարդյունաբերական ընկերությունը պարտավոր է այդ վճարումներից հարկ պահել և հետո այդ պահումները փոխանցել պետական հարկային մարմիններին: Այն դեպքերում, երբ այդ վճարումների հասցեատերերը տեղական գրանցում ունեցող ընկերություններ են, դրանք հաշվեգրվում են ընկերության եկամտային հարկի պարտավորության հաշվին: Օտարերկրյա կազմակերպություններին վճարման պարագայում դրանք դիտվում են որպես վերջնական հարկեր, որոնք ուղղվում են օտարերկրյա ենթակապալառուի եկամտային հարկերի մարմանը, որոնք հակառակ պարագայում նա պարտք կմտար: Հարկային պահումները հարկերից խուսափելու դեմ պայքարի միջոց են (հավաքագրվելով հարկի վճարման պահին և երկրում հարկատու ընկերությունների վրա պարտավորություններ դնելով, վճար ստացողների՝ հարկերից խուսափելու հնարավորությունները նվազագույնի են հասցված): Նույն կերպ, պահման ենթակա կարող են լինել տոկոսագումարի և շահութամասի վճարումները, չնայած կրկնակի հարկումը կանխող համաձայնագրերը հաճախ նվազեցնում կամ ընդհանրապես չեն նախատեսում պահումներ այդ վճարումներից: Այսպիսով, հնարավոր ներդրողների վրա այս հարկերի ազդեցությունը գնահատելիս կարևոր է ժամանակավորապես մոռանալ պահումների նորմատիվային դրույթաչափերի մասին:

**Պետության մասնաբաժինը հանքարդյունաբերական գործունեությունից.** Թեև բոլոր պետությունները ըստ էության հանդիսանում են իրենց ընդերքի սեփականատերը, որոշ պետություններ նախընտրել են նաև լինել իրենց երկրներում իրականացվող հանքարդյունաբերական գործունեության որոշ մասի սեփականատերերը: Պետության

<sup>6</sup>Վարձակալության հարկերը պետք է կիրառվեն առանձնացման հիմունքով:

մասնաբաժինը կամ պետական մասնակցությունը կարող է տարբեր դրսևորումներ ունենալ: Պետությունը կարող է մասնակցել լիարժեք վճարվող հիմունքներով (ներդրողին հավասար հիմունքներով մասնակցելով հանքավայրի շահագործման նախապատրաստական ծախսերին), կարող է մասնակցել համախառն եկամտի իր մասնաբաժնով (որոշակի եկամուտների հաշվին վճարելով նախապատրաստական աշխատանքների համար մինչև դրանց լրիվ մարումը) կամ կարող է ընտրել այսպես կոչված «կապիտալի զուտ արժեքը» (ստանալով հասույթներ իր մասնաբաժնի դիմաց՝ առանց ֆինանսական բեռ, պարտավորություն ստանձնելու): Պետական մասնակցությունը կարող է լինել ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական նկատառումներով, թեև արժի նշել, որ պետական մասնաբաժնի դիմաց ֆինանսական հատույցներ կարելի է ապահովել այլ ֆիսկալ մեխանիզմներով ևս, մինչդեռ մասնակցության որոշ ձևերի պարագայում ռիսկերը կարող են զգալի լինել:

**Ավելացված արժեքի հարկեր (ԱԱՀ).** Ավելացված արժեքի հարկերը վերջնական սպառման դիմաց սահմանվող հարկեր են: Քանի որ հանքարդյունաբերական արտադրանքը սպառման նպատակով արտերկիր է արտահանվում, հանքարդյունաբերական ընկերությունները, որպես կանոն, ներդրման դիմաց իրենց վճարած ԱԱՀ-ը կարողանում են ետ ստանալ արտադրանքի իրացումից: Սակայն քանի որ հանքարդյունաբերական գործունեությունը մեծ կապիտալ միջոցներ է պահանջում, իսկ արտադրությանը նախորդող նախապատրաստական շրջանը կարող է երկար տևել, հետևաբար, բնականոն եղանակով ԱԱՀ-ի կիրառումը հաճախ կարող է հանգեցնել տևական ժամանակով հանքարդյունաբերական ընկերությունների կողմից իրենց կրեդիտային դիրքերի գերազանցման, ինչն էլ նշանակում է, որ հարկային մարմինները ստիպված են լինելու ամենամյա հիմունքով հատուցում (հարկի վերադարձ) վճարելու կամ հաշվանցում կատարելու, երբեմն, տարիներ շարունակ: Այս համակարգի թերությունների ու բարդությունների պատճառով որոշ երկրներում հատուկ պայմաններ են առաջարկվում հանքարդյունաբերական ընկերություններին (օրինակ, ներմուծման զրոյական հարկ հանքարդյունաբերական գործունեության համար): Այս հատուկ պայմանները, սակայն, կարող են բարդություններ և ռիսկեր առաջացնել, որոնց նկատմամբ անհրաժեշտ է սահմանել հանգամանալից վերահսկողություն:

**Մաքսատուրքեր.** Մաքսատուրքերը կարելի է կիրառել թե՛ բյուջեի եկամուտներ ապահովելու և թե՛ տեղական արդյունաբերությունը պաշտպանելու նպատակներով: Հանքարդյունաբերություն ունեցող շատ երկրներում մաքսատուրքերը դիտվում են որպես հանքարդյունաբերական գործունեությունից ստացվող եկամուտների ամենավաղ աղբյուրը (բացի պայմանագրի ստորագրման պահին ստացվող բոնուսներից) և այդ իսկ պատճառով ֆիսկալ ռեժիմում խիստ շեշտադրված են: Սրա ռիսկն այն է, որ հանքավայրի շահագործման

Նախապատրաստական ծախսերը բարձրացնելը կարող է զգալիորեն ապախրախուսել ներդրումը, մասնավորապես այլ առումներով ևս՝ ծախսատար նախագծերի դեպքում:

**Այլ վճարներ.** Հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմներին բնորոշ են այլ տեսակի վճարներ ևս: Կան երկրներ, որտեղ գյուղական կամ համայնքային զարգացման բյուջեներ զգալի գումարներ են վճարվում, որոնք հաշվարկվում են որպես հաստատագրված վճարներ կամ որպես հանքահումքի արժեքի կամ եկամտի տոկոսային մաս: Հողօգտագործման վճարները և ընդերքօգտագործման լիցենզիաները ևս կարող են կիրառվել որպես բյուջեի եկամուտների աղբյուր, ինչպես նաև որպես հանքարդյունաբերական ընկերությունների կողմից հողակտրոնների «մթերումը» ապախրախուսելու միջոց: Պայմանագրի ստորագրման պահին բոնուսներ ստանալը սովորաբար տարածված է նավթարդյունաբերության ոլորտում, սակայն դրսևորվել է մի շարք հանքարդյունաբերական այլ համակարգերում ևս: Դրանք երևի թե ավելի նպատակահարմար են այն դեպքերում, երբ ռեսուրսի առկայության վերաբերյալ տեղեկացվածությունը բավարար է ընդերքօգտագործման իրավունքների աճուրդ անցկացնելու համար: Բացի այդ, թեև աշխատավարձի հարկը հանքարդյունաբերական գործառնությունների նկատմամբ հաշվարկվող հարկ չէ, այդուամենայնիվ, դրանք ևս կարող են բյուջեի եկամուտների նշանակալի աղբյուր հանդիսանալ, հատկապես հանքարդյունաբերական նախագծի նախապատրաստական փուլում, երբ բարձր վարձատրվող օտարերկրացիների և հատուկ որակավորում չպահանջող մասնագետների թիվը ամենամեծն է:

**Կայունացում.** Կայունացումը կարևոր հասկացություն է, որը բավականին հաճախ է հանդիպում արդյունագործական ? ոլորտներում: Կայունացումը ֆիսկալ ռեժիմի մասնակի կամ ամբողջությամբ «սառեցումն» է, այնպես որ լիցենզիայի տրամադրումից կամ պայմանագրի կնքումից հետո օրենքում արված փոփոխությունները որևէ կերպ չազդեն այն ընկերությունների վրա, որոնց վրա տարածվում է կայունացման դրույթը: Հիմնավորումն այն է, որ ներդրողների համար ֆիսկալ ռեժիմը պետք է լինի խիստ որոշակի, որպեսզի նրանք որոշակի վստահությամբ կարողանան կանխատեսել իրենց հատույցները տվյալ նախագծից և համոզված լինեն, որ այդ հատույցն արդարացնում է ներդրումը: Չարգացած երկրներում, որպես կանոն, չի առաջարկվում կայունացում, սակայն այն երկրները, որտեղ ներդրումային ռիսկը ավելի բարձր է համարվում, կայունացումը կիրառական է: Կայունացման ամենահեռահար եղանակը բոլոր օրենքների (այլ ոչ միայն՝ ֆիսկալ ռեժիմի) «սառեցումն» է: Այսպես, բնապահպանական օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը կամ առողջապահական և անվտանգության նկարգերը կարող են «սառեցվել» որևէ կոնկրետ նախագծի համար, կամ կարող է պահանջվել, որպեսզի պետությունը տվյալ ընկերությանը փոխհատուցի այս դրույթներու մկատարված փոփոխությունների հետ կապված լրացուցիչ ծախսերը: Առավել նեղ կայունացումը կարող է վերաբերել միայն մի քանի առանցքային ֆիսկալ պայմաններին:

Կայունացման մեխանիզմների մի կարևոր հատկանիշ է այն, թե որքանով են դրանք իրական կայունացում առաջարկում և արդյոք դա «միակողմանի» կայունացում է, թե ոչ: Միակողմանի կայունացման պարագայում ընկերությունը կարող է պաշտպանված լինել հարկերի բարձրացումից՝ միաժամանակ հնարավորություն ունենալով օգտվել հարկերի իջեցումից: Այսպիսի դրույթի կիրառումը հատկապես խնդրահարույց կարող է լինել այն դեպքերում, երբ պետությունը որոշում է, օրինակ, բարձրացնել ռոյալթին կամ իջեցնել հարկը՝ հաշվանցվող գումարի միջոցով (կամ հակառակը): Նման դեպքերում համեմատաբար չեզոք քաղաքականության նկիրառումն, ըստ էության, կբերի նրան, որ ընկերությունը կօգտվի իջեցված հարկերից՝ միաժամանակ պաշտպանված լինելով ռոյալթիի բարձրացումից: Կայունացման գաղափարին կապակցված հասկացություն է նաև այսպես կոչված՝ «ամենանպաստավոր պայմաններում գործող նկերություն» հասկացությունը: «Ամենանպաստավոր պայմաններում գործող ընկերություն» հասկացությունը ենթադրում է, որ կառավարությունը ընկերությանը տալիս է նույն հարկային արտոնությունները կամ խթանները, որոնք առաջարկվում են համանման գործունեություն իրականացնող այլ ընկերություններին: Սա կարող է եականորեն սահմանափակել քաղաքականության այլընտրանքները:

### III. Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտը

Հայաստանն ունի բազմատեսակ օգտակար հանածոներ ի պաշարներ, այդ թվում՝ երկաթի, պղնձի, մոլիբդենի, կապարի, ցինկի, ոսկու, արծաթի, ծարիրի, այլումինի, ինչպես նաև ոչ մետաղական օգտակար հանածոներ:<sup>7</sup> Մետաղական հանքաքարի արդյունահանումը կազմում է ընդհանուր ընդերքօգտագործման ավելի քան 90%-ը: Հայաստանը աշխարհում 7-րդ տեղն է զբաղեցնում մոլիբդենի արտադրության և 9-րդը՝ հաշվարկված պահումների մասով (2014 թվականի տվյալներով): 2012 թվականին Հայաստանում արտադրվել է 41,220 տոննա պղնձի խտանյութ, ինչի շնորհիվ Հայաստանը 10-րդ տեղում է հայտնվել Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 15 պղինձ արտադրողների շարքում: Տարածաշրջանի 16 ոսկի արտադրողների շարքում Հայաստանը 9-րդ տեղում է:<sup>8</sup>

Հանքարդյունաբերությունը և մետաղագործությունը Հայաստանի տնտեսության առանցքային բաղադրիչներն են: Հանքարդյունաբերությունը Հայաստանի արտահանման կազմում ամենամեծ մասնաբաժին ունեցող ոլորտն է: Այն կազմում է վերջին տարիների արտահանման ծավալների ավելի քան կեսը<sup>9</sup> և արդյունագործական գործունեության մոտ

<sup>7</sup> ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն (<http://www.minenergy.am/en/page/472>), ԱՄՆ երկրաբանական ուսումնասիրություն (2014թ.)

<sup>8</sup> ԱՄՆ երկրաբանական ուսումնասիրության տվյալներ (տարբեր հրատարակություններ):

<sup>9</sup> Ցուցանիշները ներառում են նաև ոչ թանկարժեք մետաղների արտադրությունը: միայն հանքարդյունաբերական արտադրանքը կազմում է արտահանման ծավալների մոտ 30%-ը: Տե՛ս ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն (<http://www.minenergy.am/en/page/472>), Համաշխարհային բանկի (2011թ.), Ազգային վիճակագրական հետազոտություն, ՄԱԾԾ (2014թ.):



17%-ը<sup>10</sup>: 2015 թվականին լուրջ աճ է արձանագրվել հանքարդյունաբերության ոլորտում, ինչը մասամբ պայմանավորված է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի բացմամբ, որը երկրորդ ամենախոշորն է Հայաստանում: Հայաստանի տնտեսության մեջ հանքարդյունաբերության ոլորտի ունեցած դերի վերաբերյալ լրացուցիչ ցուցանիշներ են բերված Հավելված 1-ում:

Մասամբ արձագանքելով հանքարդյունաբերության ոլորտից ստացվող ոչ կայուն հարկային եկամուտների շուրջ բարձրացված մտահոգություններին՝ Հայաստանը 2011 թվականին ընդունել է ՀՀ Ընդերքի մասին նոր օրենսգիրքը և համապատասխան օրենսդրականփաթեթ: Այս փոփոխությունների մեծ մասով բնօգտագործման վճարների համակարգը փոխարինվեց մետաղական օգտակար հանածոների դիմաց վճարվող փոփոխական ռոյալթիով: ՀՀ կառավարությունն ակնկալում էր, որ նոր օրենսգիրքը թույլ կտա ապահովել նշանակալի լրացուցիչ հարկային մուտքեր: Ընդերքի մասին նոր օրենսգիրքը քննադատության է արժանացել շրջակա միջավայրի պաշտպանությամբ զբաղվող մի շարք խմբերի ու հասարակական կազմակերպությունների կողմից, որոնց մտահոգությունն այն է, որ այն թուլացնում է քաղաքացիների մասնակցությունը հանքարդյունաբերության ոլորտի ներդրումների վերաբերյալ որոշումների կայացմանը և մեղմում է կարևոր բնապահպանական դրույթները:<sup>11</sup>

## IV. Հայաստանի հանքարդյունաբերության Ֆիսկալ Ռեժիմը

### Ռոյալթիներ

Մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող կամ մետաղական խտանյութ արտադրող հայաստանյան կազմակերպությունները<sup>12</sup> պետք է ռոյալթի վճարեն մետաղական խտանյութի, ձուլվածքի կամ վերջնական արտադրանքի իրացման շրջանառությունից:<sup>13</sup>

Խտանյութի վաճառքի պարագայում ռոյալթիի հաշվարկման հիմք է համարվում արտադրանքի վաճառքի պայմանագրով նախատեսված գինը և մատակարարման պայմանագրին համապատասխան որոշված ծավալը: Ռոյալթին ենթակա է վճարման եռամսյակային կտրվածքով՝ ապրանքի մատակարարման պահին մատակարարման պայմանագրին համապատասխան վճարման ենթակա գումարի չափով: Զանի որ մատակարարի և գնորդի միջև կնքված մատակարար մանպայմանագրում որպես կանոն սահմանվում են իրացման շրջանառության ճշգրտման դրույթներ՝ մետաղներ իվերջնական պարունակության հաշվարկը կատարելուց հետո, ապա ռոյալթիի ճշգրտումները պետք է

<sup>10</sup>ՄԱԶԾ (2014թ.)

<sup>11</sup> Նման մտահոգությունների վերլուծությունը սույն հաշվետվության շրջանակներից դուրս է:

<sup>12</sup> Ռոյալթի վճարողներ՝ մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և մետաղի խտանյութ արտադրող կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք (Տե՛ս ՀՀ օրենքը «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին», հոդված 13.3):

<sup>13</sup> Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման մասով այլ վճար է կիրառվում:

հաշվի առնվեն այն եռամսյակի ընթացքում, որի ժամանակ կատարվել է այդ վերջնահաշվարկը: Այդ վերջնահաշվարկները կատարելիս հաշվի չի առնվում խոնավության կամ ֆիզիկական անմաքրության դիմաց կատարվող նվազեցումը գնից, և վերջնական ծավալները կարող են ավելի քան երկու տոկոսով պակաս լինել, քան ի սկզբանե արձանագրված ծավալն էր:

Ռոյալթիների հաշվարկի հիմքում ընկած գները կարող են ավելի քան 10%-ով տարբերվել միջազգային գներից, որոնց հիմքում ընկած են Լոնդոնի մետաղների բորսայի (LUF) տվյալները:

Ձուլվածքի իրացման պարագայում ռոյալթիի հաշվարկման հիմք է հանդիսանում վերջնական արտադրանքին համապատասխան օգտագործված խտանյութի ֆիզիկական ծավալը՝ խտանյութի միջազգային միջին գների կիրառմամբ՝ հիմք ընդունելով Հաայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի կողմից (Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա) հայտարարված գինը:<sup>14</sup>

Ծավալները հաշվարկվում են ձուլվածքի կշռի հիման վրա՝ արտահայտված տոննայով, որը բազմապատկվում է ձուլման համար մատակարարված խտանյութի այն ծավալով, որն օգտագործվում է մեկ տոննա ձուլվածք ստանալու համար՝ կախված կիրառվող տեխնոլոգիապես ընդունելի եղանակներից: Նույնատիպ բանաձև է օգտագործվում վերջնական արտադրանքի իրացման նկատմամբ ռոյալթիի հաշվարկման համար:

Ռոյալթիի դրույթաչափը կիրառվում է վերը նկարագրված հաշվարկման բազայի նկատմամբ՝ հաշվի առնելով եկամտաբերությունը, և հաշվարկում է հետևյալ բանաձևով.

$$R = 4 + [P / (I \times 8)] \times 100,$$

որտեղ՝

R = ռոյալթիի դրույթաչափ (%)

P = EBIT (հարկման ենթակա եկամուտը՝ նախքան տոկոսադրույթներն ու հարկերը հանելը, առանց հաշվի առնելու նախորդ տարիներից փոխանցված հարկային կարուստները)<sup>15</sup>, արտահայտված ՀՀ դրամով

<sup>14</sup>Ռոյալթիների հաշվարկման կարգը հաստատող ՀՀ կառավարության որոշման մեջ սահմանված է՝ «Հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ձուլվածքի համար օգտագործված խտանյութի ֆիզիկական ծավալ է համարվում ձուլվածքի մեկ տոննայի արտադրության համար փաստացի օգտագործված՝ տեխնոլոգիապես հիմնավորված խտանյութի ֆիզիկական ծավալը»: Թեև թարգմանությունը որոշակի մեկնաբանությունների տեղիք է տալիս, այդուհանդերձ հասկանալի է, որ այս ձևակերպման նպատակն է գնահատել ռոյալթիի խտանյութում մետաղների պարունակության նկատմամբ, ինչպես նաև արտադրության գործընթացում կորցրած մետաղական պարունակության նկատմամբ:

<sup>15</sup>«P»-ն այս բանաձևում սահմանված է որպես «ռոյալթիի հաշվարկի բազայի և նվազեցումների դրական տարբերությունը՝ «եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն (բացի ֆինանսական գործունեության ծախսերից և նախորդ տարվանից փոխանցված հարկային

I = Իրացումից ստացված համախառն հասույթը՝ ԶԶ դրամով (առանց ԱԱՀ)

EBIT-ն և համախառն հասույթը հաշվարկվում են բացառապես հանքարդյունաբերական գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ, թեև եթե կազմակերպությունն ունի մի հանքարդյունաբերության մի քանի արտոնագիր՝ EBIT-ն և համախառն հասույթները հաշվարկվում են տվյալ ընկերության ողջ գործունեության նկատմամբ (այսինքն՝ չտարանջատված):

Շահութահարկը հաշվարկելու նպատակով ռոյալթին պակասեցվում է եկամուտներից:<sup>16</sup>

### Շահութահարկ

Հանքարդյունաբերական ընկերությունների հարկումն իրականացվում է 1997 թվականին ընդունված՝ «Շահութահարկի մասին» ԶԶ օրենքի համաձայն: Հանքարդյունաբերական ընկերությունների նկատմամբ շահութահարկը կիրառվում է նույն կերպ, ինչ Հայաստանում գործող այլ տնտեսվարող սուբյեկտների պարագայում է, և հանքարդյունաբերության ոլորտին վերաբերող հատուկ դրույթներ, թերևս, չկան:

### Հարկման դրույթաչափ

Շահութահարկի դրույթաչափը 20% է, որը գանձվում է «Շահութահարկի մասին» ԶԶ օրենքով (հոդված 33) նախատեսված կարգով հաշվարկված եկամուտից:

### Հաշվառում

Հարկվող շահույթի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով (հոդված 42):

### Մաշվածքագրում (ամորտիզացիա)

Մաշվածքագրումը պահանջվում է իրականացնել մաշվածքագրման գծային եղանակով:

Հանքարդյունաբերության ոլորտի համար գործում են «Շահութահարկի մասին» ԶԶ օրենքով ընդհանուր կարգով նախատեսված դրույթաչափերը: Հոդված 12-ով նախատեսված դրույթաչափեր են՝

Շենք-շինություններ	20 տարի
Այլ կապիտալ ակտիվներ	5 տարի

կորուստներից): Այսպիսով, EBIT բացասական արժեքները սույն բանաձևի շրջանակներում համարվում են զրո՝ ապահովելով, որ ռոյալթին 4%-ից ցածր չլինի:

<sup>16</sup> Հետաքրքիր է նկատել, որ Հայաստանի ռոյալթիի հաշվարկման բանաձևի նկարագրություններում հաճախակի նշվում է, որ բանաձևը սխալ է: Lydian միջազգային վեբ կայքում ռոյալթին նկարագրված է հետևյալ կերպ. «[Ռոյալթին] Հայաստանում վերևից ներքև գծայնությամբ կատարվող գանձում է (կամ ավելի ճշգրիտ՝ գանձվում է շրջանառությունից և շահույթից՝ նախքան տոկոսավճարները (EBIT)» (տե՛ս <http://www.lydianinternational.co.uk/armenia-mining-tax.htm>). Ըստ եռվայան, ռոյալթի ի հաշվարկում EBIT-ն օգտագործվում է դրույթաչափը որոշելու համար, իսկ ռոյալթին ինքնին չի գանձվում EBIT-ից:

Ոչ նյութական ակտիվներ	Մաշվածքագրվում են ավելի շուտ, քան տնտեսական օգտակարության ժամկետն է կամ մինչև տաս տարի
Շահագործման ծախսեր <sup>17</sup>	Մաշվածքագրվում են ավելի շուտ, քան տնտեսական օգտակարության ժամկետն է կամ մինչև տաս տարի

Աղետի գոտում (ներկայումս՝ Գյումրի) տեղակայված ակտիվների մասով գործում են մաշվածքագրման այլ դրույթաչափեր: Ըստ օրենքի, հանքարդյունաբերական ընկերությունները չեն օգտվում արագացված մաշվածքագրումից:

### Գործունեությունից վնասները

Հայաստանի Հանրապետության բոլոր հարկատուների՝ գործունեությունից վնասը փոխանցվում է վնասի առաջացմանը հաջորդող 5 տարիներին (հոդված 25):

Հայաստանի Հանրապետությունում նախատեսված չեն հանքարդյունաբերական օբյեկտներն առանձնացնելու պահանջներ, ինչը կենթադրեր, որ կազմակերպությունը հնարավորություն կունենա հետախուզական և հանքավայրը շահագործման նախապատրաստելու ծախսերը հանել ցանկացած գործող հանքավայրի եկամուտներից:

### Թույլ միջոցավորում

Ձեռնարկատիրական գործունեության ֆինանսավորման համար ներգրավված փոխառումիջոցների տոկոսադրույթների մասով ծախսը նվազեցնելի է, որի նվազագույն թույլատրելի դրույթաչափը սահմանված է օրենսդրությամբ: Թույլ միջոցավորման կարգ գոյություն չունի:<sup>18</sup>

### Գլխավոր գրասենյակի ծախսեր

Օտարերկրյա մայր ընկերություն ունեցող հայկական ընկերությունների գլխավոր գրասենյակի ծախսերի՝ նվազեցնելիության առնչությամբ մեծ սահմանափակումներ չկան, թեև Հայաստանից դուրս կատարվող որոշակի ծախսերի նվազեցումը սահմանափակվում է կառավարության սահմանած դրույթաչափերով (հոդված 16):<sup>19</sup>

### Հարկման բազայից հանվող ծախսեր

Հայաստանի հարկային ոլորտի մասնագետներն արձանագրում են, որ բոլոր հարկատուների համար որոշակի ծախսերի՝ հարկման բազայից հանելիության վերաբերյալ հստակությունը բացակայում է, և որ այդ նվազեցումները բազմաթիվ՝ թվացյալ

<sup>17</sup> «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 14

<sup>18</sup> Տե՛ս PWC (2011թ.)

<sup>19</sup> Նվազեցումները վերաբերում են նաև ներկայացուցչական ծախսերին, գովազդման և մարքեթինգային ծախսերին, վերապատրաստումներին և քիզնես այցերին:

տրամաբանված ծախսերի մասով հաճախ չեն թույլատրվում: Ցանկալի է հարկման բազայից հանվող ծախսերի սահմանումներն ավելի հստակեցվեն:

### **Փոխկապակցված անձանց միջև իրականացվող գործարքներ**

Հայաստանի՝ անրապետությունում փոխկապակցված անձանց միջև իրականացվող գործարքներին վերաբերող հատուկ դրույթներ սահմանված չեն, թեև Հայաստանը մի շարք՝ հարկային համաձայնագրեր է կնքել, որոնք պարունակում են ՏՀՁԿ մոդելային հարկային համաձայնագրի 9-րդ հոդվածին նմանվող հոդվածներ:<sup>20</sup>

### **Վերականգնում (Ռեկուլտիվացիա և Մեյիորացիա)**

Ընդերքօգտագործող ընկերություններից պահանջվում է հատկացումներ կատարել «շրջակա միջավայրի բապանության դրամազխիսն» (ՀՀ Ընդերքի մասին օրենսգրք, հոդված 69), որը ստեղծված է բնապահպանական միջոցառումների իրականացումը ֆինանսավորելու նպատակով (այդ թվում՝ մեյիորացիա, որը նախատեսվում է հանքավայրի շահագործման տեխնիկական պլանում), ինչպես նաև հանքարդյունաբերական գործունեության հետևանքով հասցված այն վնասները փոխհատուցելու համար, որոնք չեն շտկվում ընկերությունների կողմից: Հանքարդյունաբերական ընկերություններին այդ դրամազխից հատկացումներ են արվում անհրաժեշտ ծախսերը կատարելու համար, և հաշվեկշիռը փոխհատուցվում է հանքարդյունաբերողին: Հարկման նպատակներով դրամազխին կատարվող հատկացումները համարվում են նվազեցնելի, չնայած այս կետի առնչությամբ օրենքում հստակություն չկա: Ենթադրվում է, որ փաստացի փոխհատուցումը ևս պետք է ներառվի եկամուտների մեջ, թեև օրենքը կրկին այս մասով հստակ չէ: Սահմանված չէ դրամազխի ներքին գործառնությունների հարկման մեխանիզմը:

### **Հատուկ խթաններ**

**Կայունացում.** ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 25-րդ հոդվածը նախատեսում է եռամյա կայունացման ժամանակաշրջան, որը հաջորդում է ընդերքօգտագործման իրավունքի շնորհմանը, որի ընթացքում կազմակերպությունը չի վճարում բնօգտագործման վճար, ռոյալթի, շահուրճահարկ, ինչպես նաև պահումներ շահաբաժիններից կամ տոկոսներից, որոնք ստացվել են ընդերքօգտագործման իրավունքի շնորհումից հետո՝ անկախ կայունացման ժամանակաշրջանում տեղ գտած օրենսդրական փոփոխություններից: Հայաստանի Հանրապետությունն առաջարկել է հարկի կայունացման մեխանիզմ, որը վերաբերում է ոչ միայն դրույթաչափերին, այլ նաև շահուրճահարկ հաշվարկի բոլոր

<sup>20</sup> Տե՛ս EY (2014) Worldwide Transfer Pricing Reference Guide 2014: ՏՀՁԿ մոդելային համաձայնագրի 9-րդ հոդվածն ամրագրում է, որ փոխկապակցված անձանց միջև իրականացվող գործարքների պարագայում, երբ «պայմանները որոշվում կամ սահմանվում են երկու լծեռնարկությունների միջև՝ իրենց առևտրային կամ ֆինանսական հարաբերությունների շրջանակներում, որոնք տարբերվում են այն հարաբերություններից, որոնք առկա են անկախ ձեռնարկությունների միջև, ապա շահույթները, որոնք, այլ պայմանների պարագայում բաժին կհասնեն ձեռնարկություններից մեկին, սակայն այդ պայմանների պատճառով բաժին չեն հասել նրան, կարող են ներառվել այդ ձեռնարկության շահույթներում և համապատասխանաբար՝ հարկվել»:

բաղադրիչներին որոշ պայմանագրերում, ինչպես նաև տարբեր աղբյուրներ վկայում են, որ այդ ժամկետը կարող է լինել 10-12 տարի:<sup>21</sup> Օտարերկրյա ներդրումների մասին օրենքով որպես կայունացման ժամկետ առաջարկվում է 5 տարի:

### **Հարկային Պահումներ**

Ոչ ռեզիդենտներին վճարվող շահութաբաժիններն ու տոկոսադրույքները ենթակա են հարկային պահումների աղբյուրում՝ հետևյալ դրույթաչափերով.

Տոկոսադրույք՝ 10%

Շահութաբաժին՝ 10%

Հարկային պահումների դրույթաչափերը կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրի ուժով նվազեցվել են 5%-ի, իսկ որոշ դեպքերում՝ 0%-ի, երբ վճարառուի գտվելու վայրը այնպիսի երկրներում է, որոնց հետ Հայաստանը կնքել է կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրեր:<sup>22</sup>

### **Անսպասելի շահույթ/Վարձակալության հարկ**

Հայաստանում անսպասելի շահույթի կամ վարձակալության մասով առանձին հարկ չկա, թեև ինչպես նշվեց վերը, ռոյալթին ներառում է նաև շահույթով պայմանավորված բաղադրիչ, որը նախատեսված է ռոյալթիի դրույթաչափը բարձրացնելու համար՝ նախագծի շահութաբերության աճին զուգահեռ:

### **Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)**

Իրացման նախատեսված սահմանաչափը գերազանցելու դեպքում բոլոր հարկ վճարողները որպես կանոն ենթակա են 20% ԱԱՀ-ով հարկման: Հայաստանում գործում է ԱԱՀ հաշվարկի կրեդիտային մեթոդը, որի համաձայն մատակարարներին վճարվող ԱԱՀ-ը հաշվարկվում է գնորդներից հավաքագրվող ԱԱՀ-ի նկատմամբ:

Հաստատված ցանկով ներմուծվող այն ապրանքները, որոնց մասով սահմանված է 0% մաքսատուրքի արտոնություն և որոնք ակցիզային հարկով հարկման ենթակա չեն, ենթակա չեն նաև ԱԱՀ-ով հարկման:<sup>23</sup>

Արտահանվող արտադրանքը, այդ թվում հանքարդյունաբերական, Հայաստանում ենթակա է «զրո դրույթաչափով» ԱԱՀ-ով հարկման, իսկ որոշ ապրանքներ (այդ թվում՝ թանկարժեք և

<sup>21</sup> Համաշխարհային բանկը նկարագրում է 10-ամյա կայունացման ժամանակահատվածը (տե՛ս Համաշխարհային բանկ (2011թ.)), մինչդեռ այլ զեկույցներում նշվում է, որ ստորագրվել են կայունացման 12-ամյա պայմանագրեր (տե՛ս, օրինակ, «Armenia: Mining Journal Special Publication»՝ <http://www.infomine.com/publications/docs/MiningJournalNov2005.pdf> վեբ կայքում): Ավելի երկարաժամկետ կայունացման ժամանակահատվածներ սահմանելու իրավասությունը, ըստ ամենայնի, բխում է «Հանքային պաշարների զարգացման նպատակով ընդերքի օգտագործման և առևտրային արտադրության հատկացումների մասին» նախկին օրենքից, որը ուժը կորցրել է և փոխարինվել ներկայիս՝ Ընդերքի մասին օրենսգրքով: Պարզ չէ՝ արդյոք կայունացման եռամյա ժամկետից ավելի երկար ժամկետը, որը նախատեսված է Ընդերքի օգտագործման մասին օրենսգրքի 25-րդ հոդվածով, առաջարկվում է նոր օրենքի ընդունումից ի վեր, թե ոչ:

<sup>22</sup>Տե՛ս Վարդանյան և գործընկերներ (2015թ.)

<sup>23</sup> Տե՛ս Հայաստանի զարգացման գործակալություն (2015թ.)

կիսաթանկարժեք քարերի իրացումը) ազատված են ԱԱՀ-ից:<sup>24</sup> Ներքին սպառման հանքարդյունաբերական արտադրանքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման ստանդարտ դրույքաչափով: Ներդրանքի մասով հաշվարկված ԱԱՀ-ը, որը գերազանցում է իրացման ծավալներով վճարման ենթակա հարկին, որպես կանոն հաշվեգրվում է հետագա հաշվետու ժամանակաշրջաններում վճարման ենթակա ԱԱՀ-ի հաշվին, թեև ներդրանքի մասով վճարված ԱԱՀ-ի վերադարձը (ենթակա է վճարման 90 օրվա ընթացքում) թույլատրվում է զրո դրույքով հարկման ենթակա գործարքներին ուղղակիորեն առնչվող՝ գնված և ներմուծված ծավալների մասով:<sup>25</sup>

### **Մաքսատուրք և ակցիզային հարկ**

ՀՀ մաքսային օրենսգրքի համաձայն հանքարդյունաբերական սարքավորումների և պարագաների համար նախատեսվում է ներմուծման զրոյական տուրք:<sup>26</sup>

### **Այլ վճարներ**

Ի լրումն վերը նշված վճարումների և վճարների՝ Ընդերքի մասին օրենսգիրքը ընդերքօգտագործման համար նախատեսում է հետևյալ լրացուցիչ վճարները՝ (1) բնապահպանական վճար՝ բնապահպանական միջոցառումների իրականացման համար, (2) առողջապահության և անվտանգության, ինչպես նաև լցակայանների մշտադիտարկման վճար, և (3) ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրք (հոդված 61): Այս վճարների դրույքաչափերը ցածր են, և դրանք շատ փոքր տոկոս են կազմում հանքարդյունաբերության ոլորտից ՀՀ պետբյուջեի մուտքերի կազմում:

### **Կիրառվող այլ դրույթներ**

Տեղական կամ օտարերկրյա կազմակերպություններին կարող է տրվել ընդերքօգտագործման իրավունք (Ընդերքի մասին օրենսգիրք, հոդ. 20) և դրանք կարող են օտարել այդ իրավունքը՝ համապատասխան լիազոր մարմնի համաձայնությամբ (Ընդերքի մասին օրենսգիրք, հոդ. 23):

Ընդերքօգտագործման իրավունքը տրամադրվում է առավելագույնը 50 տարի ժամկետով (3-տարի՝ երկրաբանական ուսումնասիրության նպատակով), որը կարող է երկարաձգվել (Ընդերքի մասին օրենսգիրք, հոդ. 27 և 55):

Ընդերքօգտագործման իրավունքը կարող է դադարեցվել այդ թվում նաև ընդերքօգտագործման իրավունքով նախատեսված պայմանները չապահովելու կամ պարտադիր վճարները չվճարելու հիմքով (Ընդերքի մասին օրենսգիրք, հոդ. 30):

<sup>24</sup> Նկատենք, որ «զրո դրույք» և ԱԱՀ-ից «ազատումը» երկու միանգամայն տարբեր հասկացություններ են, որոնք հաճախ շփոթում են: Երբ ապրանքի մասով հաշվարկված է «զրո դրույքաչափ», տվյալ ապրանք մատակարարողները կարող են պահանջել ներդրված միջոցների նկատմամբ վճարված ԱԱՀ-ի ամբողջական վերադարձ: Ի տարբերություն դրա՝ եթե ապրանքն «ազատված է» ԱԱՀ-ից, ապա ապրանքի իրացումից ԱԱՀ չի գանձվում, սակայն միաժամանակ չի վերադարձվում ներդրված միջոցների մասով վճարված ԱԱՀ-ը:

<sup>25</sup> Տե՛ս PWC (2011 թ.)

<sup>26</sup> Տե՛ս նաև՝ «Օտարերկրյան երդումների մասին» ՀՀ օրենք (հոդ. 15)

Ընդերթօգտագործման իրավունք հայցող դիմումատուները, ում դիմումը բավարարվել է, ընդերթօգտագործման մասին պայմանագիր են կնքում պետության հետ (Ընդերթի մասին օրենսգիրք, հոդ. 54): Հարկային ռեժիմի առումով նաև հարկ է նշել, որ ընդերթօգտագործման պայմանագրերում պետք է մանրամասն նախատեսվի շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարվող վճարների «հաշվարկի և վճարման» կարգը, ինչպես նաև դրույթներ տվյալ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն առնչվող պարտականությունների մասին: Ընդերթօգտագործման պայմանագրերը չպետք է հակասեն օրենսդրությանը (հոդ. 54 (5)):

## V. Հարկային Ռեժիմի վերլուծություն

Հայաստանի Հանրապետությունում հանքարդյունաբերության հարկային ռեժիմն<sup>27</sup> ունի երկու հիմնական բաղադրիչ.

1. Արժեքային (ադվալորային) ռոյալթի (ռոյալթին կարելի է դիտարկել որպես երկու առանձին բաղադրիչ՝ հաստատագրված 4% ռոյալթի և փոփոխական ռոյալթի) և
2. Ընդհանուր հիմունքներով կիրառվող կորպորատիվ հարկ (ներառյալ պահվող հարկերը՝ ոչ ռեզիդենտներին արվող փոխանցումներից):

Այս ընդհանուր կառուցվածքը տրամաբանական է, սակայն յուրաքանչյուր բաղադրիչում կան տարրեր, որ բարելավման կարիք ունեն Հայաստանի Հանրապետության սահմանած խնդիրների իրագործումն ավելի հաջող ապահովելու համար: Սույն փաստաթղթի V մասում ամփոփ դիտարկվել է հարկման համակարգի արդյունավետությունը, որին հաջորդում է դրա տարբեր բաղկացուցիչների հանգամանալից վերլուծություն:

### Քաղաքականության Վերլուծություն

**Ընդհանուր.** Բացառությամբ հանքարդյունաբերական ընկերություններին ընձեռված՝ ներմուծման տուրքից ազատման արտոնության, Հայաստանի Հանրապետությունում ընդերթօգտագործման ոլորտի նկատմամբ ընդհանուր առմամբ կիրառվում են մաքսային և շահութահարկով հարկման՝ այլ ոլորտների համար նախատեսված նույն կարգերն ու ընթացակարգերը: Հասկանալի է նաև, որ Հայաստանում ընդունված չէ առանձին պայմանագրերում ֆինանսական դրույթներ նախատեսելը, ինչը ենթադրում է, որ ընդերթօգտագործող ընկերությունները որպես կանոն հարկվում են միօրինակ կարգով: Այս առանձնահատկություններից յուրաքանչյուրն արտացոլում է լավագույն փորձը և պետք է որ նպաստի վարչարարության արդյունավետ իրականացմանը և նվազեցնի հարկերով պայմանավորված խաթարումները տնտեսության մեջ:

<sup>27</sup> Վերլուծությունը վերաբերում է մետաղական հանածոների արդյունահանման մասով գործող հարկման ռեժիմին:



**Ռոյալթիներ.** Ռոյալթիի առավելությունն այն է, որ դրա վարչարարությունը համեմատաբար ավելի դյուրին է իրականացնել, քան եկամտից գոյացող հարկերի և շահույթի հիման վրա հաշվարկվող այլ կարգավորումների պարագայում է, այդուամենայնիվ, փոփոխական ռոյալթիի հիմքում ընկած է շահույթի բաղադրիչների հաշվարկը, ինչը կարող է վարչարարության առումով ավելի դժվար լինել և ռոյալթիից ստացվող եկամուտները ենթարկել տրանսֆերային գնագոյացման ռիսկերի և հարկերից խուսափելու տարբեր եղանակների: Այս ռիսկերը ավելի մեծ են այն դեպքերում, երբ փոփոխակա նբանաձևում կիրառվող նվազագույն ռոյալթին հատկապես ցածր է (տե՛ս Հարավային Աֆրիկայի օրինակը, որտեղ նվազագույն ռոյալթին 0,5% է): Դրան հակառակ՝ Հայաստանի Հանրապետությունում ռոյալթիի շեմը համեմատաբար բարձր է, ինչը կանխում է փոփոխական ռոյալթիի համակարգերում առկա ռիսկը, երբ արդյունահանման դիմաց համարժեք փոխհատուցում չի ապահովվում: Այս ամենից հետո հարկ է նշել, որ ռոյալթիի տարրեր կան, որոնք կարելի է բարելավել:

Ռոյալթիի հաշվարկման նպատակներով հարկ է, որ Հայաստանը առանձնացնի առանձին հանքարդյունաբերական նախագծերի ակտիվները (կիրառի հարկերի հաշվարկման առանձնացված մոտեցում (ring-fencing)): Ակտիվների առանձնացումը որպես կանոն բնորոշ է առանձին ֆինանսական գործիքներին, ինչպես օրինակ, ռեսուրսի վարձակալության հարկ, քանի որ վարձակալության չափը տարբեր նախագծերի դեպքում տարբեր է: Թեև Հայաստանի Հանրապետությունում չի գործում ռեսուրսի վարձակալության հարկ, սակայն այն շահույթով պայմանավորված՝ փոփոխական ռոյալթի է, որի հիմքում ընկած է շահույթի հաշվարկը: Ռոյալթիի հաշվարկման նպատակով այդ շահույթը պետք է հաշվարկվի առանձին հանքարդյունաբերական նախագծի ակտիվների առանձնացման հիմունքով, որպեսզի մեթոդը ճիշտ աշխատի: Շահույթով պայմանավորված ռոյալթիները որպես կանոն ուղղվում են պետությանը (որը հանդիսանում է ռեսուրսի տերը) փոխհատուցելուն ավելի մեծ չափով՝ բարձրորակի համար, ավելի ցածր որակին համարժեք՝ ավելի ցածր արժեք ունեցող հանքավայրերի համար, բարձր արժեք ունեցող հանքավայրերի համար՝ այլ հավասար պայմանների դեպքում: Քանի որ չառանձնացված ռոյալթիի պարագայում ռոյալթիի դրույքաչափը հաշվարկվում է միջին հանքավայրերի միջինացված շահութաբերության հիման վրա, ապա ցածր շահութաբերության հանքավայրերի նկատմամբ կիրառվող ռոյալթիները կարող են ցանկալից բարձր լինել, իսկ բարձր շահութաբերության հանքերի պարագայում՝ ցանկալից ցածր: Սա կարող է խաթարել որոշումները, նվազեցնել եկամուտները և բարդացնել վարչարարությունը:

Հայաստանի Հանրապետությունում մետաղական ձուլվածքների ռոյալթիի հիմքում ընկած են պայմանագրային գները,<sup>28</sup> սակայն «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված է, որ ռոյալթիի հաշվարկման

<sup>28</sup> Ձուլվածքի մասով ռոյալթիի հաշվարկի բազան հաշվարկվում է LUF տվյալների հիման վրա հրապարակված գների կիրառմամբ:

Նպատակով պայմանագրային գների տարբերությունը Լոնդոնի մետաղների բորսայի գներից չպետք է գերազանցի 10%-ը: Կողմնորոշիչ գներին վերաբերող այս երաշխիքը հանդիսանում է չարաշահումները կանխող դրույթ, որը թույլ է տալիս ՀՀ կառավարությանը որոշակի պաշտպանվածություն ապահովել սխալ գնանշումից: LUF գները՝ որպես ռոյալթիի հաշվարկի հիմք, այլ ոչ պարզապես այս նվազագույն գնի ապահովման հիմք կիրառելը, թերևս, ունի առավելություններ: Ռոյալթիի բազան հաշվարկելիս հրապարակված կողմնորոշիչ գներից, այլ ոչ՝ պայմանագրային գներից օգտվելը կպարզեցնի իռոյալթիի մասով վարչարարությունը՝ վերացնելով պայմանագրային գները մշտադիտարկելու և գնահատելու անհրաժեշտությունը: Բազմաթիվ երկրներում ռոյալթին շարունակում է հաշվարկել մատակարարման գների որոշակի ցուցանիշի հիման վրա, սակայն աճում է այն երկրների թիվը, որոնք կիրառում են կողմնորոշիչ գնի մեթոդը: Արժեքի որոշման այս մեթոդաբանությունը թերևս նախընտրելի է՝ ռոյալթին մատակարարման գնի հիման վրա հաշվարկելու համեմատ (որի պարագայում կառավարությունն ավելի խոցելի է տրանսֆերային գնագոյացման չարաշահումների առումով) կամ արժեքի որոշման այնպիսի մեթոդները, որոնք թույլ են տալիս փոքրացնել արտադրության տարբեր ծախսերը (ինչը բարդացնում է վարչարարության իրականացումը և բարձրացնում է շահարկումների ռիսկը՝ ռոյալթիի մասով պարտավորությունների նվազեցման մասով):<sup>29</sup>

Ավելին, այն տնտեսվարողները, որոնք վաճառք են իրականացնում փոխկապակցված անձանց, շահագրգռված են պայմանագրային գները սահմանելու LUF գնային նվազագույն շեմի մակարդակում, ինչի հետևանքով որոշ հանգամանքներում դրանք ավելի ցածր են լինում, քան անկախ կողմերի գործարքներով սահմանված գները: Ռոյալթիի մասով կենսունակ վարչարարության բացակայության պայմաններում վտանգ կա, որ ներկայիս համակարգի արդյունքում կարող է փաստացի կիրառվել երաշխիքային գինը, որի պարագայում պայմանագրային գնի կիրառումը առաջին դեպքում ավելի մեծ բարդությունների կհանգեցնի՝ միաժամանակ առաջարկելով սահմանային օգուտներ պարզեցված համակարգի նկատմամբ, որը հենվում է բացառապես LUF գների վրա:<sup>30</sup>

<sup>29</sup> Ցանկալի է կատարել հսկիչ գների մեթոդաբանության որոշակի լրամշակում: 2011 թվականին Համաշխարհային բանկի կողմից կատարված՝ Հայաստանի հանքարդյունաբերության հարկային ռեժիմի ուսումնասիրության մեջ նշված է, որ հսկիչ գների կիրառումը նախկին ռոյալթիի պարագայում հանգեցրել է ավելի ցածր բյուջետային եկամուտների, քան փաստացի գների կիրառման պարագայում կլինեին, դա պայմանավորելով այն հանգամանքով, որ Հայաստանում պղնձի գները էականորեն ավելի բարձր էին միջազգային գնից (ըստ ամենայնի՝ պայմանավորված Հայաստանի հանքավայրերի մեծ մասի բազմամետաղական լինելու հանգամանքով): Այս հարցը՝ նոր ռոյալթիի ներդրումից հետո Հայաստանի փորձի վերաբերյալ լրացուցիչ ուսումնասիրություն է պահանջում:

<sup>30</sup> Պայմանագրային գների փոխարեն LUF գները՝ որպես ռոյալթիի հիմք օգտագործելու արդյունքում կարող է բարձրանալ գործող ռոյալթիի բազան: Նման դեպքերում կարելի է օգտվել ռոյալթիի դրույթաչափի հաշվանցվող նվազեցումից: Օրինակ, LUF գնի 3.6% կազմող ռոյալթին համարժեք կլինի LUF գնի 90%-ի 4%-ի չափով սահմանված ռոյալթիին ( $0.04 \times 0.90 = 0.036$ ): Այս պարագայում, ներկա պահին LUF գնի 90% նվազագույն գնի հիման վրա հաշվարկված ռոյալթի վճարող ընկերությունները նույն գումարը կվճարեն վերանայված համակարգի պայմաններում: Եթե ենթադրվում է, որ ռոյալթիի կիրառման նպատակով վերցված գների մեծ մասը մոտ է 90% շեմին, ապա ռոյալթիի բանաձևի փոփոխությունը կարող է ընդերքօգտագործողների մեծ մասի համար որևէ եկամտային փոփոխության չհանգեցնել, միևնույն ժամանակ, ցանկացած կազմակերպություն, որը ներկայումս կիրառում է 90% (սա չի կարող վերաբերել 29-րդ ծանոթագրության մեջ հիշատակված դեպքում) շեմը գերազանցող պայմանագրային գին, ապա ավելի քիչ կվճարի: Սա պարզապես նպատակ ունի ցույց տալու, թե ինչպես կարելի է ճշգրտումներ կատարել ռոյալթիի իրավունքում առանց հանգեցնելու ռոյալթիի աճի մետաղական հանածոներ արդյունահանողների համար: Կարելի է կիրառել ռոյալթիի դրույթաչափի ավելի փոքր ճշգրտում, ինչը կհանգեցնի նրան, որ որոշ ընկերություններ ավելի բարձր ռոյալթիներ կվճարեն ներկայիս համակարգի շրջանակներում:

Ռոյալթիին վերաբերող մեկ այլ կարևոր նկատառում է այն, թե որ պահին է որոշվում հանածոյի արժեքը՝ ռոյալթիի հաշվարկման նպատակով: Հայաստանի Հանրապետությունում ռոյալթին գնահատվում է վաճառված արտադրանքի մետաղական պարունակության հիման վրա, ինչը նշանակում է, որ տրանսֆորմացիոն պրոցեսում հանքանյութի պարունակության կորստի մասով ռոյալթի չի վճարվում: Այն հանգամանքը, որ արտադրական կորուստների մասով ռոյալթի չի հաշվարկվում նշանակում է, որ ընկերությունները պակաս շահագրգռված են առավելագույնի հասցնելու վերամշակման պրոցեսի արդյունավետությունը, ինչը ստիպված կլինեին անել, եթե ռոյալթին գնահատվեր արդյունահանված մետաղի պարունակության հիման վրա: Արդյունավետության ան ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը պետք է դիտարկի ռոյալթին արտադրական պրոցեսի հնարավորինս վաղ փուլում՝ առաջին իսկ «չափելի կետում» կիրառելու հարցը, այլ ոչ թե իրացման ծավալների մասով ռոյալթի սահմանելու: Ի լրումն ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը խրախուսելուն<sup>31</sup>՝ այս մոտեցումը մեկ այլ առավելություն է ունի, այդ թվում՝ (1) արտադրողների շրջանում գործող ռոյալթիի դրույթաչափերի տատանումների նվազեցում՝ ելնելով նրանց իրացման կետից, (2) վերացնել ինտեգրացված գործառնությունների անհրաժեշտությունը՝ խտանյութի պարունակությունը ձուլվածքի կազմում չափելու համար, և (3) նվազեցնել տրանսֆերային գնագոյացման հետ կապված ռիսկերը:

Հավելված 2-ում (և հանքարդյունաբերության ոլորտի հարկմա նհամակարգի տարբեր ուսումնասիրություններում) նշված է, որ ռոյալթիի դրույթաչափերը որպես կանոն տատանվում են 0%-ից 9%-ի միջակայքում<sup>32</sup>: Նույնիսկ համեմատաբար ցածր եկամտաբերություն ապահովող նախագծերի պարագայում Հայաստանի փոփոխական ռոյալթին, ամենայն հավանականությամբ, կհասնի այս միջակայքի առավելագույն ցուցանիշին կամ կգերազանցի այն: Օրինակ, մինչև հարկումը 18% համեստ եկամտաբերություն ապահովող նախագծի պարագայում հանքի շահագործման ողջ ընթացքում կարող է կիրառվել 9% միջին ռոյալթի, մինչդեռ ավելի շահաբեր նախագծերի դեպքում ռոյալթիի դրույթաչափը ավելի բարձր կլինի: Այս համեմատաբար բարձր ռոյալթիի դրույթաչափերի տնտեսական ազդեցությունը նախագծի վրա կարող է լինել ավելի ուժեղ խթանների ստեղծում այն ընկերությունների համար, որոնք ավելի ցածր են ներկայացնում եկամուտների ու շահույթի հաշվարկները, որպեսզի այս կերպ նվազեցնեն ռոյալթիի

<sup>31</sup> Քաղաքացիական հասարակության բարձրաձայնած քննադատություններից մեկն ուղղված է բնօգտագործման վճարները ռոյալթիով փոխարինելու դեմ, քանի որ բնօգտագործման վճարը հաշվարկվում է հանածոների օգտագործման հիման վրա, մինչդեռ ռոյալթին հաշվարկվում է արտադրանքի իրացման ծավալի հիման վրա: Ինչպես երևում է շարադրանքից, կարիք չկա աղվալորեմային ռոյալթին հաշվարկել իրացման առաջին իսկ կետում, փոխարենը կարելի է հաշվարկել չափման առաջին կետում՝ կիրառելով հրապարակված համաթվի հիման վրա վերցված ենթադրյալ գինը: Այս կերպ, աղվալորեմային ռոյալթին կարող է իրապես այնպիսի խթան հանդիսանալ, ինչպիսին են բնօգտագործման վճարները (որը նման է միավոր ռոյալթիին), միաժամանակ նաև պահպանելով աղվալորեմային մոտեցման առավելությունները, օրինակ՝ ավելի լավ արձագանք օգտակար հանածոների գների փոփոխությանը:

<sup>32</sup> Կարելի է նկատել, որ Հավելված 1-ում բերված մի քանի ռոյալթիներ 9%-ից բարձր դրույթաչափ ունեն: Գրեթե բոլոր դեպքերում սրանք սահմանային դրույթաչափեր են, որոնք կիրառվում են արտադրանքի ծավալի մի մասի նկատմամբ միայն: Գործող միջին դրույթաչափը այս երկրներում սովորաբար 0-9%-ի միջակայքում է:

դրույթաչափի փոփոխական բաղադրիչը: Այսպիսի խթանները միշտ էլ առկա են այն դեպքերում, երբ ֆիսկալ ռեժիմում առկա է լինում շահույթի վրա հիմնված բաղադրիչ (ինչպես օրինակ՝ շահուղթխարկ), սակայն ռոյալթիի՝ շահույթով պայմանավորված չափանիշի վրա հիմնված լինելու հանգամանքը բաղադրում է ընկերությունների մոտիվացիան և բարձրացնում է «խաղաղույթները» ՀՀ իշխանությունների համար՝ եկամտային հաշվարկների նորմերի կատարումն արդյունավետությամբ մշտադիտարկելու և կիրարկելու հարցում:

Չնայած այն հանգամանքին, որ օրենքով սահմանված՝ ռոյալթիի բանաձևը տեսականորեն պետք է որ հանգեցնի համեմատաբար բարձր ռոյալթիի դրույթաչափի ընկերությունների մեծ մասի համար, այդուհանդերձ, հարցված որոշ պաշտոնյաներ և դիտորդներ հավատ են արտահայտել առ այն, որ մետաղական հանածոներ արդյունահանող ընկերությունների շրջանում 4-5%-ին մոտ ռոյալթիի դրույթաչափ վճարելու միտում է նկատվում: Սա չի ճշգրտվել համապատասխան մարմինների հետ, սակայն ընկերությունների խորհրդատուների այն ենթադրությունը, թե ռոյալթիի դրույթաչափը ավելի շատ մոտ է 4%-ին, կարող է որոշ մտահոգությունների պատճառ դառնալ, քանզի դա խոսում է այն մասին, որ այս բանաձևը հնարավոր է կիրառվի ոչ այն եղանակով, ինչ նախատեսված է, կամ կարող է նվազեցվել եկամտի չափման մանիպուլյացիաների միջոցով: Լրացուցիչ ուսումնասիրություն է անհրաժեշտ հասկանալու համար, թե ռոյալթին գործնականում ինչպես է կիրառվել: Եթե պարզվի, որ ըստ եռլայան ռոյալթիի ակնկալվող դրույթաչափն էականորեն տարբերվում է փաստացի վճարվող դրույթաչափից, ապա դա կնշանակի, որ փոփոխական ռոյալթիի մեխանիզմը արդյունավետ չէ և որ հրատապ կարիք կա բարելավելու ռոյալթիի մասով վարչարարությունը: Դա կարող է հուշել փոփոխական ռոյալթիի մեխանիզմի առնչությամբ տարբեր մոտեցումներ կիրառելու հարցը:<sup>33</sup> Ռոյալթիի դրույթաչափի և կառուցվածքի լրացուցիչ քննարկումը բերված է սույն Մասի վերջում՝ տնտեսական վերլուծության և մոդելավորման քննարկման հատվածում:

Լուծման կարիք ունեցող մեկ այլ հարց է ռոյալթին սահմանող օրենսդրական դաշտը: Ներկայումս ռոյալթիի հաշվարկին վերաբերող նորմեր կարելի է գտնել մի շարք իրավական փաստաթղթերում՝ ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ մասը նախատեսում է, որ ռոյալթին այն վճարն է, որը ենթակա է վճարման մետաղական հանածոների արդյունահանման մասով, «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքը նախատեսում է ռոյալթիի դրույթաչափի բանաձև, ՀՀ կառավարության 29.12.2011 թվականի N 1901-Ն որոշումը դրույթներ է ամրագրում

<sup>33</sup> Օրինակ, փոփոխական ռոյալթին կարելի է կապակցել համապատասխան օգտակար հանածոյի կողմնորոշիչ գներում տեղ գտած փոփոխություններին: Այսպիսի մոտեցումն ավելի բնորոշ է նավթային ոլորտի ֆիսկալ ռեժիմներին, սակայն կարելի է կիրառել նաև այլ օգտակար հանածոների պարագայում՝ այստեղ ևս կիրառելով դիտարկելի շուկայական գները: Օրինակ, Քուինզենդում փոփոխական ռոյալթի է սահմանված գունավոր և թանկարժեք մետաղների մասով, որն աճում է այն դեպքերում, երբ գերիշխող շուկայական գները գերազանցում են սահմանված սահմանաչափերը: Բազմամետաղական հանքերի նկատմամբ նման մոտեցման կիրառումը կարող է հավելյալ բարդություններ բերել:

ռոյալթիի հաշվարկի նպատակով իրացման շրջանառության ծավալների հաշվարկման համար, իսկ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է շեմ, որը համապատասխանում է LUF գների 90%-ին: Հայաստանի օրենսդրության շրջանակներում այս իրավանորմերի ճիշտ փոխադրեցությունը հանքարդյունաբերական ընկերությունների և պետության միջև այս պահին ընթացող բազմաթիվ իրավական քննարկումների կենտրոնում է: Ռոյալթիի մասով իրավական հենքի օպտիմալացման շնորհիվ պոտենցիալ ներդրողների և այլ շահագրգիռ կողմերի համար ռեժիմն ավելի պարզ կդառնա, ինչպես նաև կպարզեցվի վարչարարությունը և կկրճատվի նման վեճերի ռիսկը:

**Շահութահարկ.** Հատուկ արտոնությունների և ընդերքօգտագործման մասով առանձին դրույթների բացակայությունը, որի մասին խոսվեց վերը, դրական է, այդուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության շահութահարկի դրույթաչափն ավելի ցածր է միջազգային ստանդարտներից: Հավելված 2-ում նկարագրված օրինակում բերված միջինը 27%-է, ինչը համահունչ է հանքարդյունաբերության հարկային ռեժիմների այլ համեմատական ուսումնասիրություններին:

Եկամտից հաշվարկվող հարկի կառուցվածքն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք արժանի են հիշատակման.

- **Տրանսֆերային գնագոյացման կարգ.** Հայաստանը չունի տրանսֆերային գնի որոշման կարգ, ինչի արդյունքում խոցելի է մնում հարկերի ոչ ռացիոնալ վճարման առումով: Սա, ըստ ամենայնի, խնդիր է ոչ միայն հանքարդյունաբերության, այլ նաև տնտեսության այլ ճյուղերի համար: Տրանսֆերային գինը փոխկապակցված անձանց միջև ձևավորվող՝ մատակարարվող ապրանքների և ծառայությունների գինն է: Զանի որ այսպիսի գործարքների իրականացման ընթացքում գնագոյացումը «վերահսկվում է», ապա «բազմազգ» ընկերությունները հնարավորություն են ունենում հարկերը փոխանցել հարկման ցածր մակարդակ ունեցող տարածքներ՝ իրենց կողմից իրականացվող գնագոյացման արդյունավետ վերահսկման բացակայության պայմաններում:
- **Ակտիվների առանձնացում.** Ընդհանուր առմամբ, անկախ այն հանգամանքից՝ ակտիվներն առանձնացվել են շուքափարկով հարկման, թե այլ նպատակով, սա մի մոտեցում է, որն ունի թե՛ դրական, թե՛ բացասական կողմեր: Ակտիվների առանձնացումը թույլ չի տալիս ընկերություններին նվազեցնել կամ հետաձգել շահութաբեր հանքավայրերի եկամտային հարկերը՝ հետախուզման և հանքավայրը շահագործման նախապատրաստելու ծախսերը հանելով մեկ այլ նախագծի շրջանակներում՝ ավելի վաղ փուլում իրականացված (կամ վնասաբեր) նախագծից: Երկրները կարող են նախընտրել չառանձնացնել ակտիվները

հետագա արդյունահանման համար խթաններ ստեղծելու նպատակով:<sup>34</sup> Ակտիվների առանձնացումը փոփոխական ռոյալթի կիրառման նպատակով քննարկվել է նախկինում, և չնայած հնարավոր է ակտիվներն առանձնացնել ռոյալթի մասով, սակայն ոչ եկամտային հարկի մասով (կամ հակառակը), այդուամենայնիվ, միևնույն առանձնացված ակտիվի (կամ չառանձնացված ակտիվների) հիման վրա երկու գանձումների կիրառումից էլ կարող է շահել արդյունավետությունը:

- **Թույլ միջոցավորում.** Հայաստանում թույլ միջոցավորման կանոնի բացակայությունը ենթադրում է հնարավոր եական եկամուտների կորուստ, մասնավորապես զուգակցված բավականին բարձր թույլատրելի տոկոսադրույթով՝ ինչպես հայտնել են տարբեր աղբյուրները:<sup>35</sup> Բարձր թույլատրելի տոկոսադրույթները և թույլ միջոցավորման կանոնի բացակայությունը ընկերությունների համար խթաններ են ստեղծում իրենց կապիտալ ներդրումները կառուցելու որպես փոխկապակցված սուբյեկտի պարտք (այլ ոչ՝ սեփական միջոցներ) և կիրառելու բարձր դրույթաչափեր՝ հարկերը նվազագույնի հասցնելու նպատակով: Նման համակարգերը նաև թույլ են տալիս ընկերություններին օտարերկրյա ներդրման շահույթը վերադարձնել ներդրող երկիր՝ հարկի ավելի ցածր փաստացի դրույթաչափով, նույնիսկ եթե հարկման դրույթը ցածր է (կամ եթե հարկային համաձայնագրով նախատեսված են ավելի ցածր հարկային պահումներ):
- **Գլխավոր գրասենյակի ծախսերը.** Օտարերկրյա մայր ընկերություններից գանձվող՝ կառավարման ծառայությունների դիմաց չափազանց բարձր հոնորարները կարելի է օգտագործել որպես հարկման ենթակա եկամուտը Հայաստանից՝ օֆշոր կամ հարկման ցածր մակարդակ ունեցող տարածքներ փոխանցելու համար: Կառավարման ծառայությունների մասով ծախսերը պետք է կարգավորվեն տրանսֆերային գնագոյացման ռեժիմով (եթե դրանք առկա են), սակայն քանի որ դրանք վերահսկելը կարող է չափազանց դժվար լինել, հետևաբար որոշ երկրներ հակված են սահմանելու կառավարման հոնորարների հանելի գումարի հատուկ սահմանաչափեր: Հայաստանում նման սահմանափակումներ չկան: Առավելագույն սահմանաչափի ներդրումը (օրինակ, ծախսերի որոշակի

<sup>34</sup> Կարևոր է նշել, որ այս խթանը կիրառվում է անհամաչափ, նոր մուտք գործողները ի վիճակի չեն օգտվել հարկի վճարումը հետաձգելու այս հնարավորությունից, որը արտոնվում է արդեն իսկ իրագործվող և շահութաբեր նախագծեր իրականացնող կազմակերպություններին:

<sup>35</sup> Համաշխարհային բանկը՝ Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի հարկային ռեժիմի վերլուծության մեջ նշում է, որ Հայաստանում գործող տոկոսադրույթները շատ բարձր են: Տե՛ս Համաշխարհային բանկ (2011 թ.): Հեղինակը հնարավորություն չի ունեցել ճշգրտել ներկայումս գործող թույլատրելի դրույթաչափը:

հաստատագրված տոկոս) կարող է օգնել կրճատելու պետական եկամուտների արտահոսքը:

- **Բացասական տարբերության (վնասների) փոխանցում հաջորդող ժամանակաշրջանի հաշվեկշռի հաշվին.** Կախված այն հանգամանքից, թե ինչ այլ վճարներ են նախատեսվում հանքարդյունաբերության հարկային ռեժիմով՝ Հայաստանը կարող է դիտարկել վնասները հաջորդող ժամանակաշրջանի հաշվեկշռի հաշվին փոխանցելու մասով սահմանափակումները կրճատելը: Ներկայումս գործող՝ 5-ամյա սահմանափակումը միջազգային գործելակերպի ցածր մակարդակում է, և թերևս որևէ հիմք չկա՝ մերժելու պատշաճ կերպով առաջացած ծախսերի նվազեցումները: Սահմանափակումներն ավելի շատ վերաբերում են խոշոր վնասները հաջորդող ժամանակաշրջանի հաշվեկշռի հաշվին փոխանցմանը ժամանակի ընթացքում հետևելու վարչարարության բեռին, սակայն մեծ կապիտալ միջոցներ պահանջող ճյուղերի պարագայում, որտեղ ծրագրերը երկարաժամկետ են, իսկ հանքարդյունաբերության փուլերը՝ երկար, երևի թե տեղին չի լինի պետական եկամուտները մեծացնելը՝ էական վնասների ժամկետի լրանալը թույլ տալու միջոցով: Նախընտրելի կարող է լինել բացասական տարբերությունները հաջորդ ժամանակահատվածի հաշվեկշռի հաշվի նփոխանցելու 7-ամյա, 10-ամյա ժամկետ կամ նույնիսկ անժամկետ ժամանակաշրջան սահմանելը, կամ Լիբիայում կիրառվող սահմանափակման նման կարգավորման կիրառումը, որը թույլ է տալիս վնասի փոխանցում անորոշ ժամկետով, սակայն ընդհանուր գումարի առավելագույն սահման կարելի է նախատեսել ամեն տարվա համար՝ արտահայտված հարկման ենթակա եկամուտների որոշակի տոկոսով:
- **Կրկնակի հարկման համաձայնագրեր.** Հայաստանում հաշվարկվող հարկերը ողջամիտ մակարդակի վրա են, սակայն Հայաստանը կրկնակի հարկման մի քանի համաձայնագրեր է վավերացրել պահուրդի դրույթաչափերը նվազեցնելու համար: Դա թույլ է տալիս ընկերություններին Հայաստանում ունեցած իրենց ակտիվները կառուցել այնպես, որ օգտվեն նվազեցված դրույթներից: Պահվող հարկերի նվազեցումները՝ հարկային համաձայնագրերի միջոցով էական խնդիր է հարուստ բնական պաշարներ ունեցող երկրների համար, որտեղ հանքարդյունաբերության ոլորտի ներդրումային ներհոսքերը զգալի են, իսկ ներդրումային արտահոսքերը՝ համեմատաբար փոքր:
- **Վերականգնում.** Հանքարդյունաբերական ընկերություններից սահմանված կարգով պահանջվում է վճարումներ կատարել բնության և բնապահպանական դրամագլխին, որը նախատեսված է հողի հարստացման ծախսերը, ինչպես նաև չնախատեսված վնասները ծածկելու համար: Նշվել է, որ այս դրամագլխին

հատկացվող վճարումները թե՛ ընկերությունները և թե՛ պետական մարմինները համարում են հանելի հարկման ենթակա եկամուտներից: Սա հստակեցնելու համար հարկ է հրապարակել կոնկրետ դրույթներ, ինչպես նաև հստակեցնել ընկերությանը վերադարձվող ավելցուկային գումարների (դրանք պետք է հարկվեն, եթե նվազեցում է արվել հատկացումների համար), ինչպես նաև նման դրամագլուխների ներկառուցված տոկոսադրույթների հարկման մեխանիզմը:

**Քնապահպանական վճարներ.** Հայաստանում գործող քնապահպանական վճարների մակարդակն ու կառուցվածքը որոշակի քննարկումների տեղիք է տվել: Սույն հաշվետվության մեջ նշված է, որ ներկայումս քնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսված քնապահպանական վճարներից պետական բյուջեն էական եկամուտներ չի ստանում: Անշուշտ, կարևոր է, որ շրջակա միջավայրին հասցված վնասները և ռեսուրսները փոխհատուցվեն, անկախ նրանից՝ այդ ռեսուրսի օգտագործումը կամ հասցված վնասը անհրաժեշտ և նախատեսված է հանքավայրի շահագործման նախագծով, թե նախատեսված չէ (օրինակ, առաջացել է վթարի հետևանքով): Բանն այն է, որ ճիշտ կառուցված վճարները կարելի է դիտել ոչ թե որպես պետական եկամուտների աղբյուր, այլ որպես որոշակի քնապահպանական գործելակերպեր խրախուսելու կամ ապախրախուսելու միջոց: Օրինակ, հասկանալի է, որ օրենքի վերջին նախագծում վճարները կհաշվարկվեն ըստ գոյացած մակաշերտերի կամ արտադրական լցակույտերի (պոչերի) քանակի, սակայն հանքարդյունաբերական ընկերությունները հինգ տարով ազատված են այդ օրենսդրական պահանջներից:

Կարևոր է նաև նկատել, որ այդ հարկային գանձումները կառավարության հայեցողության տակ եղած միակ գործիքը չեն հանքարդյունաբերության ոլորտում քնապահպանական գործունեությունը կանոնակարգելու համար: Գործուն քնապահպանական կարգավորումները և դրանց կիրարկումը, երևի թե, ավելի կարևոր են, քան պոչերի և մակաշերտերի հեռացման համար գանձվող փոքր վճարները: Այս առումով, կարևոր են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հստակ չափանիշներն ու չափորոշիչները, ինչպես նաև այնպիսի դրույթների առկայությունը, որոնք կապահովեն, որպեսզի մելիորացիայի համար նախատեսված դրամագլուխների հաշվեկշիռները, ժամանակի բոլոր կետերում, բավարար լինեն կանխատեսվող մելիորացման և ռեկուլտիվացիոն նախագծերի ծախսերը հատուցելու համար<sup>36</sup>: Այս գումարների չափերը

<sup>36</sup> Գործող վճարային սխեման պահանջում է, որպեսզի ընկերությունները կանխավ վճարեն կանխատեսվող վերականգնման ծախսերի 15%-ը, իսկ մնացած մասը հավասար մասերով վճարվում է նախագծի տևողության ընթացքում: Նման համակարգի պարագայում վտանգ կա, որ այդ ֆինանսական միջոցները բավարար չեն լինի բոլոր դեպքերում վերականգնման և հանքի փակման ծախսերը ծածկելու համար, քանի որ փակման պարտավորությունները միշտ չէ, որ աճում են գծային եղանակով և փակումը կարող է տեղի ունենալ նախատեսվածից ավելի վաղ՝ պայմանավորված տարբեր պատճառներով: Այսպես, Հայաստանը պետք է դիտարկի այլ տիպի ֆինանսական երաշխիքներ պահանջելու տարբերակը՝ նախատեսվող վերականգնման ծախսերի և բնության և քնապահպանական դրամագլխի հաշվեկշիռի միջև անհամապատասխանությունները ցանկացած պահի լրացնելու համար, օրինակ, փակման պարտատոմսեր, երաշխիքներ, արժեթղթեր կամ ապահովագրություն:



պետք է պարբերաբար թարմացվեն, հատկապես հանքավայրի շահագործման պլանում փոփոխություններ մտցնելու համար:

Սույն փաստաթղթի շրջանակներից դուրս է որոշելը՝ արդյոք առաջարկվող բնապահպանական հարկերը իրապես կապահովեն համապատասխան քաղաքականության խնդիրների իրագործումը՝ թե ոչ: Պետական եկամուտների տեսանկյունից կարելի է պնդել, որ այդպիսի հարկերը պետք է դիտվեն որպես պետական բյուջեի մուտքերի նշանակալի աղբյուր: Եթե առաջնային հարց է բնապահպանական կառավարման համար հատկացվող ֆինանսական միջոցների սակավությունը, ապա երևի թե նախընտրելի է այդ ծախսերի համար առանձին բյուջետային տող նախատեսել, այլ ոչ՝ վճարը նախատեսված գանձումներով սահմանափակել, թեև այս վերջին մոտեցման կիրառման համար կարող են լինել տարբեր քաղաքական կամ իրավիճակային պատճառներ:

**Կայունացում.** Հայաստանի Հանրապետությունում գործում է եռամյա հարկային կայունացման ժամանակաշրջան հիմնական ֆիսկալ դրույքաչափերի մասով: Կայունացումը սահմանափակում է ՀՀ կառավարության՝ անհրաժեշտ կամ ցանկալի բարեփոխումներ իրականացնելու հնարավորությունը և կարող է բերել տարբեր ոլորտների հարկային ռեժիմների խառնաշփոթի, ինչն էլ կարող է բարդացնել վարչարարությունը: Ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված՝ եռամյա կարճ կայունացման ժամանակաշրջանը և այն հանգամանքը, որ կայունացումը, ըստ ամենայնի, վերաբերում է միայն գլխավոր ֆիսկալ դրույքաչափերին, պետք է որ մեղմացնի կայունացման բացասական ազդեցությունները և այս հարցի առնչությամբ նպատակահարմար մոտեցում առաջարկի Հայաստանի համար: Պարզ չէ՝ արդյոք ավելի լայն ընդգրկուն կամ երկարաժամկետ կայունացում նախատեսվում է առանձին պայմանագրերով, թե ոչ: Եթե դա այդպես է, ապա լրացուցիչ վերլուծություն է անհրաժեշտ՝ կայունացման քաղաքականությունների ազդեցությունը հասկանալու համար:

## Միջազգային Համադրություն և Համեմատություն

Հավելված 1-ում համեմատության համար բերված են միջազգային հարկային ռեժիմների օրինակներ: Օրինակներում ներկայացված են Հայաստանին բնական պաշարներով և արտադրության ծավալներով մոտ, ինչպես նաև շատ ավելի խոշոր արտադրական ծավալներ ունեցող երկրներ: Համեմատվող երկրներից մի քանիսը մոտ են Հայաստանին իրենց աշխարհագրական դիրքով, ինչպես նաև ներկայացված են երկրներ աշխարհի տարբեր տարածաշրջաններից: Որոշ դեպքերում, համեմատության համար իդեալական երկրները դուրս են թողնվել տեղեկատվության սակավության պատճառով:

Ինչպես վերևում նշվեց, Հայաստանի Հանրապետությունում գործող ռոյալթի, ևսյնիսկ համեմատաբար ցածր շահութաբերություն ունեցող հանքավայրերի դեպքում, ըստ ամենայնի միջազգայնորեն կիրառվող ռոյալթիների շարքում ամենաբարձր դիրքում է, մինչդեռ շահութահարկը ցածր է միջազգային ստանդարտներից: Այս եղանակով հարկման առանձին տարրերի համեմատությունը, այնուամենայնիվ, տրամաբանական հիմք չի ապահովում հարկման ռեժիմներին գնահատական տալու համար: Տերմինաբանության մեջ առկա տարբերությունները հեշտությամբ կարող են բերել ոչ համադրելի հարկային գործիքների, որոնք համեմատվում են միմյանց հետ: Առավել նշանակալի և կարևոր են ոչ թե հարկման ռեժիմի առանձին տարրերը, այլ այն, թե ինչպես է հարկման ռեժիմն աշխատում որպես մեկ ամբողջություն:

Ըստ այդմ, հաջորդիվ ներկայացված բաժիններում բերված է Հայաստանի հարկային ռեժիմի՝ որպես մեկ ամբողջություն, համեմատելի այլ ռեժիմների հետ համադրության մեջ արված տնտեսական վերլուծություն:

**Տնտեսական Վերլուծություն**

Տնտեսական վերլուծությունը և միջազգային համադրությունները կատարվել են Հայաստանում առկա բազմամետաղ հանքավայրերին իրենց չափերով համանման՝ պղնձի, ոսկու և մոլիբդենի հանքավայրերի ֆինանսական մոդելի հիման վրա: Մոդելային հանքավայրի ցուցանիշները վերցվել են տարբեր աղբյուրներից, այդ թվում հրապարակված տեխնիկա-տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրություններից և հեղինակի սեփական տվյալներից: Հանքավայրի հիմնական ցուցանիշները բերված են Աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Հանքավայրի մոդելային ցուցանիշներ<sup>37</sup>**

Արտադրված պղնձ	599,000 տ
Արտադրված ոսկի	19.9 Մ գ
Արտադրված մոլիբդեն	5000 տ
Մակարաբացման ծախսեր	450M ԱՄՆ դոլար
Գործառնական ծախսեր	3168 ԱՄՆ դոլար/տոննա պղնձի խտանյութ
Վերականգնման ծախսեր	6Մ ԱՄՆ դոլար
Շահագործման ժամկետ	21 տարի

<sup>37</sup> Մոդելը ենթադրում է յուրաքանչյուր երկրում սահմանված Նորմատիվային դրույթաչափերի լիարժեք կիրառում: Բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում պահվող հարկերի դրույթաչափերը գործնականում ավելի ցածր են, քան Նորմատիվային դրույթաչափերը, ինչը պայմանավորված է միջազգային հարկային պայմանագրերի գործողությամբ, այսպիսով, պահման իրական դրույթաչափերը կարող են տարբերվել մոդելում ներկայացվածներից: Մոդելում հաշվի առնված չեն ոչ նշանակալի վճարներն ու աշխատավարձի ֆոնդի հարկերը:

Նախագծի եկամտաբերության ներքին նորման (IRR)՝ նախքան հարկումը	22.2%
Պարտք	Եթե այլ բան նախատեսված չէ, ենթադրվում է 75% պարտքի կոնսոլիդացում ընդլայնումից
Պղնձի հեռանկարային գինը	5750 ԱՄՆ դոլար/տ FOB
Ոսկու հեռանկարային գինը	45 ԱՄՆ դոլար/գ FOB

Մոդելավորված նախագծի եկամտային ու հարկային վճարումների կառուցվածքը՝ համաձայն ՀՀ օրենսդրության, ներկայացված է Գծապատկեր 1-ում<sup>38</sup>:


Գծապատկեր 1-ից ակնհայտ է դառնում, որ Հայաստանում գործող ռոյալթիները մետաղական հանածոների արդյունաբերությունից<sup>39</sup> ակնկալվող եկամուտների գլխավոր մասն են կազմում, և իրապես, ռոյալթիները մոդելավորված նախագծի հանրագումարային զուտ ներկա արժեքի (ՉՆԱ)<sup>40</sup> մոտ 65%-ն են կազմում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում գործող ռոյալթիները միջազգային ստանդարտից բարձր են՝ սա զարմանալի չէ: Հարկման նպատակով դրա պակասեցումը ևս նվազեցնում է վճարման ենթակա շահութահարկը: Որպես համեմատություն, ցածր ռոյալթի (բարձր հարկեր) ունեցող երկրներում, ինչպիսին է Բրազիլիան, որը համադրելի է Հայաստանի հետ ընդհանուր հարկային բեռի առումով, ստանում է ռոյալթիով պայմանավորված ակնկալվող ՆՉԱ-ի ընդամենը 15%-ը:

<sup>38</sup>Այս գծապատկերում նախագծի զուտ կանխիկ հոսքերի (նախքան հարկումը) տողը ցույց է տալիս զուտ կանխիկ հոսքը նախագծի տևողության ընթացքում: Նախագծի իրականացման սկզբնական տարիների ընթացքում խոշոր բացասական արժեքները արտացոլում են այն փաստը, որ հանքարդյունաբերական նախագծերը խոշոր կապիտալ ներդրումներ են պահանջում շահագործման նախապատրաստման փուլում՝ նախքան հանքարդյունահանումը սկսելը: Ֆինանսական դրական մուտքերը սկսվում են արտադրության մեկնարկին և հանածոների վաճառքին զուգահեռ: Արտադրական փուլում կանխիկ անհավասար հոսքերը արտացոլում են արտադրական պրոֆիտի վերաբերող ենթադրությունները, որոնց հիմքում ընկած իրական հանքավայրի պրոֆիտը: Կապիտալ ծախսերի պրոֆիտը այս մոդելում (որի նկատմամբ այս ուսումնասիրության շրջանակներում արված բոլոր հաշվարկները խիստ զգայուն են) ևս հիմնված է իրական հանքավայրի պրոֆիտի վրա:

<sup>39</sup>Գծապատկերը ցույց է տալիս իրական եկամուտները՝ հաստատուն գների պայմաններում: Եկամտ իկառուցվածքի անհավասարաչափ բնույթը բնորոշ է այն հանքավայրին, որի համար արվել է այս մոդելը և արտացոլում է տիպային անհավասարաչափ արտադրական և ծախսային կառուցվածքը:

<sup>40</sup> Չուտ ներկա արժեքը հաշվարկվում է գեղչված կանխիկ հոսքերի մեթոդի կիրառմամբ, որտեղ ակնկալվող ապագա դրամական հոսքերը գեղչվում են՝ ռիսկով ճշգրտված գեղչված դրույթի կիրառմամբ (այս պարագայում ենթադրվում է, որ 8% է):

**Գծապատկեր 1**




Ռոյալթիի կարևորումը թույլ է տալիս, որպեսզի Հայաստանը հանքարդյունաբերական նախագծի իրականացման վաղ փուլից պետական եկամուտների եական մասնաբաժին ապահովի, ի հակադրություն եկամտից գոյացող հարկերի, որը սովորաբար ուշացվում է նախնական խոշոր ներդրումային ծախսերի դուրսգրման պատճառով: Ընդհանուր առմամբ, եթե ռոյալթիները չափազանց բարձր են, ապա դրանք կարող են ֆիսկալ ռեժիմը գերազանցապես ռեգրեսիվ դարձնել, և անգամ վնասաբեր ժամանակաշրջաններում խոշոր ռոյալթիներվ ճարելու հավանականությունը կարող է ապախրախուսել ներդրողներին:

Հայաստանի Հանրապետությունում գործող փոփոխական ռոյալթիս ունի շահույթի նկատմամբ զգայունակ բաղադրիչ, որը պետք է որ մեղմացնի այս ազդեցությունը: Շահույթի վրա հիմնված այս բաղադրիչը կերաշխավորի, որպեսզի ոչ շահութաբեր հանքավայրերը չվճարեն ռոյալթիի ամենաբարձր դրույթաչափը, մինչդեռ հաստատագրված բաղադրիչը կերաշխավորի, որպեսզի կառավարությունը գոնե որոշակի փոխհատուցում ստանա արդյունահանված բոլոր օգտակար հանածոների դիմաց: Ռոյալթիի կառուցվածքն առավել լավ ուսումնասիրելիս նկատում ենք, որ նույնիսկ ցածր եկամտաբերություն ունեցող հանքավայրերի պարագայում բավականին արագ կարելի է հասնել համեմատաբար բարձր ռոյալթիի: Գծապատկեր 2-ում համեմատվում է Հայաստանում գործող հանքավայրում

իրականացվող նախագծի ընթացքում կիրառված ռոյալթի միջին դրույթաչափը՝ Հարավային Աֆրիկայում գործող դրույթաչափի հետ, որտեղ կիրառվում է շահույթի հիմքով որոշվող ռոյալթին, ինչը իր կառուցվածքով նման է Հայաստանում կիրառվող ռոյալթին. դա հաշվարկվում է նախագծի՝ նախքան հարկումը ապահոված հասույթի մասով (փոփոխվող գները փոխում են եկամտաբերության ներքին նորման): Առաջին հերթին ակնհայտ է, որ Հարավային Աֆրիկայում գործող ռոյալթին ունի թե ստորին և թե վերին սահմանաչափ: Ըստ եռլայան, Հայաստանի ռոյալթին առավելագույն սահմանաչափ չունի և տեսականորեն կարող է աճել շահույթներին զուգահեռ<sup>41</sup>:

## Գծապատկեր 2




Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում կիրառվող ռոյալթին, ըստ ամենայնի, ավելի արձագանքող է շահութաբերության նկատմամբ, քան Հարավային Աֆրիկայինը, սակայն վերջինիս ընդհանուր ֆիսկալ ռեժիմը, ըստ եռլայան, մի փոքրավելի պրոգրեսիվ է, քան Հայաստանինը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ այն գերազանցապես հիմնվում է շահութահարկերի վրա, որոնք որպես կանոն ավելի պրոգրեսիվ են, քան

<sup>41</sup> Նկատենք, որ Գծապատկեր 2-ում բերված է տեսականորեն ակնկալվող ռոյալթի դրույթաչափ՝ տարբեր շահութաբերության նախագծերի համար: Ինչպես նշվել է վերը, Հայաստանի հարկատուների կողմից վճարվող ռոյալթի փաստացի դրույթները ինտարվոր է ավելի ցածր լինեն, քան այստեղ մոդելավորված դրույթները, և դա պայմանավորված է տարբեր պատճառներով, ներառյալ սխալ տրանսֆերային գնանշումը և այլ մեթոդները, որոնց կիրառմամբ նվազեցվում է եկամտի հաշվարկը: Այնուհետ, գծագրում ռոյալթի դրույթաչափը մեկուսացված է, և այն չպետք է վերցնել որպես Հայաստանի և Հարավային Աֆրիկայի ընդհանուր ֆիսկալ թեռի համեմատական ցուցանիշ, որը կախված է այստեղ քննարկված մի շարք տարբեր տարրերից: Գծապատկերներ 3-7-ում ամառաչափվում է ֆիսկալ ռեժիմների համեմատությունը՝ վերցված որպես մեկ ամբողջություն:

գերազանցապես շահույթի վրա հիմնվող՝ փոփոխական ռոյալթիները, և դա ընդամենը թերազնահատում է հարկային նռեժիմն իր ամբողջության մեջ դիտարկելու կարևորությունը՝ առանձին տարրերի վրա ուշադրությունը կենտրոնացնելու փոխարեն:

Հարկման ռեժիմին որպես մեկ ամբողջություն գնահատական տալու առաջնային չափանիշ է գործող միջին հարկադրույթը (ԳՄՀԴ): ԳՄՀԴ-ը չափում է կառավարության մասնաբաժինը նախագծի դրամական հոսքերից՝ նախքան դրանց հարկումը, և այս առումով «կառավարության մասնաբաժինը» կարևոր չափանիշ է: Գծապատկեր 3-ում բերված է Հայաստանի ԳՄՀԴ-ի համեմատությունը մի քանի այլ համեմատելիների նկատմամբ: Գծապատկերում ներկայացված են երկու ցուցանիշներ՝ չգեղչված ԳՄՀԴ (ՉՆԱ 0) և գեղչված ԳՄՀԴ (ՉՆԱ 8): Որպես կանոն, ամբողջ նախագծի արժեքից կառավարության մասնաբաժինը ավելի մեծ է գեղչվածի պարագայում: Սա պայմանավորված է նրանով, որ կառավարությունն ավելի մեծ մասնաբաժին է ստանում զուտ արժեքից սկզբնական տարիներին, երբ որոշակի եկամտային հոսքեր է հավաքագրում այն ժամանակաշրջանում, երբ ընկերությունը բացասական դրամական հոսքեր է ունենում՝ պայմանավորված հանքավայրը շահագործման նախապատրաստելու պահանջներով:

**Գծապատկեր 3**




Այուսակից ակնհայտ է դառնում, որ Հայաստանի մասնաբաժինը նախագծի զուտ ներկա արժեքից՝ 64%, համեմատության համար ընտրված երկրների համանուն ցուցանիշների շարքում գրեթե մեջտեղում է, որտեղ միջին ԳՄՀԴ-ը 65% էր: Մոդելում կիրառված արժեքը բարձրացնելը (կամ նվազեցնելը) թույլ է տալիս չափել ավելի բարձր և ցածր

եկամտաբերությունն ունեցող հանքավայրերի կանխատեսված ԳՄՅԴ-ն: Հայաստանի ակնկալվող ԳՄՅԴ-ն մոտ է թեստավորված յուրաքանչյուր սցենարի խմբի միջինին:<sup>42</sup>

Գծապատկեր 3-ում բերված է ԳՄՅԴ-ն՝ 100% սեփական միջոցների հաշվին ֆինանսավորման պարագայում: Այս մոտեցումը տարածված կիրառում ունի, որպես ֆիսկալ ռեժիմների գնահատման միջոց, սակայն անհասկանալի է դարձնում տարբեր ֆիսկալ ռեժիմների զգայունությունը պարտքի նկատմամբ: Գծապատկեր 4-ում ցուցադրվում է մի շարք երկրներում կիրառվող ԳՄՅԴ-ն՝ այն ենթադրությամբ, որ հանքավայրը շահագործման նախապատրաստելու աշխատանքների 75%-ը ֆինանսավորվում է պարտքի հաշվին, այս կերպ ընտրելով թույլ միջոցավորման, տոկոսադրույքի ծախսերի պակասեցման հնարավորության, տոկոսադրույքի պահման և ֆիսկալ ռեժիմի այլ կարևոր բաղադրիչների ազդեցությունը: Կրկին, Հայաստանը ընտրված համադրելիների շարքում գրեթե միջին դիրքերում է, և այն կրկին համոզիչ է շահութաբերության տարբեր սցենարների պարագայում:

**Գծապատկեր 4**




Ինչպես նշվել է վերը. ֆիսկալ ռեժիմի կարևոր առանձնահատկությունն է դրա պրոգրեսիվության կամ ռեգրեսիվության ընդհանուր մակարդակը: Պրոգրեսիվությունը կամ ռեգրեսիվության չափման տարածված ցուցիչ է «պետության մասնաբաժինը ընդհանուր օգուտներից»: Այս չափանիշը նման է ԳՄՅԴ-ին, սակայն այստեղ հաշվի առնված չէ սկզբնական ներդրումը, ինչը կարող է անհասկանալի դարձնել ֆիսկալ ռեժիմի

<sup>42</sup> Պարզության համար մոդելային արդյունքները ներկայացված չեն թեստավորված յուրաքանչյուր սցենարի դեպքում:

պրոգրեսիվությունը (ռեգրեսիվությունը): Այս չափանիշի կիրառման իմաստով «ընդհանուր օգուտները» հաշվարկվում են որպես մուտքեր՝ հաշվի չառած գործառնական ծախսերը և մեկնարկից հետո փոխարինող կապիտալի ծախսը:<sup>43</sup> Գծապատկեր 5-ում ցուցադրվում է պետության մասնաբաժինը ընդհանուր օգուտներից՝ համադրելի մի շարք երկրներում: Կրկին, Հայաստանը խմբի գրեթե մեջտեղում է: Նախքան հարկումը 30% եկամտաբերության ներքին նորմա (IRR) ունեցող նախագծի պարագայում Հայաստանի մասնաբաժինը ընդհանուր օգուտներից կազմում է 37.5%, իսկ խմբի միջին ցուցանիշը 39% է: Գծի կորությունը մատնացույց է անում, որ այդ ռեժիմը չափավոր պրոգրեսիվ է, ինչը պետք է որ աճողական հատույց ապահովի պետությանը՝ հանքարդյունաբերության ոլորտի աճողական շահութաբերության ժամանակաշրջաններում: Հետաքրքրական է, որ Գծապատկեր 5-ում ներկայացված են տարբեր կառուցվածքներ: Ղրղզստանի ռեգրեսիվ կառուցվածքը գլխավորապես շատ ցածր հարկադրույթի հետևանք է, իսկ Մոնղոլիայի կտրուկ պրոգրեսիվ կառուցվածքը պայմանավորված է պետական կապիտալի մեծ մասնաբաժնով:<sup>44</sup> Լիբերիայում չհարկված IRR-ի մոտ 20% կտրուկ աճը պայմանավորված է ռեսուրսի վարձակալության հարկով, որը կիրառվում է մոտավորապես այդ մակարդակում:

### Գծապատկեր 5



Ի լրումն համընդհանուր հարկային բեռի և օգուտներից ունեցած ընդհանուր մասնաբաժնի՝ կարևոր է նաև չափել սահմանային հարկային բեռը, քանի որ դա հանքավայրի ընդլայնման

<sup>43</sup> Տե՛ս Դանիել, Պ. (2010թ.)

<sup>44</sup> Մոդելը ենթադրում է, որ Մոնղոլիան կիրառում է սեփական միջոցների լիարժեք թույլատրելի մասնաբաժինը: Սեփական կապիտալի մասնաբաժինը որոշ դեպքերում կարող է ավելի փոքր լինել:




ներդրումները խրախուսելու հարցում ֆիսկալ ռեժիմի արդյունավետության կարևորչափանիշ է:

Գործող սահմանային հարկադրույքը(ԳՍՀԴ) հարկված և չհարկված հատույցի դրույքների և չհարկված հատույցի տարբերության գործակիցն է՝ սահմանային (ոչ նշանակալի) ներդրումների համար: <sup>45</sup>Յուրաքանչյուր երկրի ԳՍՀԴ-ն հաշվարկելու նպատակով յուրաքանչյուր ֆիսկալ ռեժիմի համար դիտարկվել են տարբեր գներ՝ հարկված հատույցի դրույքը իջեցնելով ենթադրյալ եկամտաբերության նվազագույն՝ 11% դրույքի:

Գինը, որը ընկերության հասույթները իջեցնում է այս մակարդակին համարվում է «ծախքածածկման գին»՝ ամենացածր գինը, որ ընկերությունը կարող է իրեն թույլ տալ և միաժամանակ ապահովել նվազագույն եկամտաբերություն: <sup>46</sup> Արդյունքները (Գծապատկեր 6) ցույց են տալիս, որ Հայաստանը մոտ է համադրվող խմբի միջին ցուցանիշին՝ թե՛ ԳՍՀԴ-ի եկամտաբերություն և թե՛ նվազագույն եկամտաբերություն ապահովող գնի առումով:

### Գծապատկեր 6



Մինչ այժմ կատարված վերլուծության հիմքում ընկած են ապրանքային խմբերի գների և առնչվող ենթադրությունները:

<sup>45</sup> St'e Daniel, P. (2010թ.)

<sup>46</sup> Վնհնար է չափել մեկ «ծախքածածկման գինը» բազմամետաղական հանքավայրի համար, քանի որ մեկ ապրանքային խմբի գնի աճը կարող է հաշվանցել մեկ այլ ապրանքախմբի գնի անկումը: Մոդելի պարզությունը ապահովելու նպատակով բոլոր ապրանքային խմբերի բազային գները տարբեր են վերցվել միևնույն տոկոսային հարաբերությամբ: Այստեղ ծախքածածկման գինը բերված է պղնձի համար՝ այն ենթադրությամբ, որ բազային սցենարից լինելու է միասնական գնային փոփոխություն:

Թեև բազային գնի մասով ենթադրությունները կարող են և ողջամիտ լինել, սակայն ժամանակի ընթացքում իրական գներն, անշուշտ, տարբերվելու են այս ենթադրություններից: Թեև հնարավոր է ստուգել ֆիսկալ ռեժիմի «վարքագիծը» մի շարք տարբեր գնային և ծախսային սցենարների պարագայում, յուրաքանչյուր ենթադրությունների շարք իդեալական չի լինի: Բացի այդ, նույնիսկ եթե մոդելը ճշգրտությամբ կանխատեսում է միջին հեռանկարային գինը ժամանակի ընթացքում, իրականում գները հաստատուն չեն: Դրանք անկանխատեսելիորեն աճում կամ ընկնում են նախագծի տևողության ընթացքում: Այս իսկ պատճառով կարևոր է ստուգել, թե ինչպես է ֆիսկալ ռեժիմն աշխատում մեծաթիվ հնարավոր անորոշ սցենարներում:

Մոնտե Կառլոյում մի սիմուլյացիոն վարժանք է իրականացվել ապագա գների շուրջ առկա անորոշությունը պարզելու համար: Նախագծի տևողության ընթացքում հաստատուն գնի փոխարեն գներացվում է պատահականության սկզբունքով ընտրված գնային շարք՝ որպես հիմք ունենալով պղնձի գների պատմական անկանխատեսելիությունը<sup>47</sup>, և մոդելն օգտագործվում է կառավարության և ընկերության հատույցները, եկամտաբերության ներքին նորման (IRR)՝ հարկումից առաջ և հետո, գործող միջին հարկադրույքը և այլ պարամետրերը հաշվարկելու համար: Այնուհետև գներացվում են պատահականության սկզբունքով ընտրված հազարավոր լրացուցիչ շարքեր, և աշխատում է նույն հաշվարկը: Սա ապահովում է տվյալների մի ընդարձակ շարք, որը թույլ է տալիս ոչ միայն գնահատել միջին ակնկալվող արժեքները տարբեր սցենարներում, այլ նաև հանդիսանում է ռիսկի ցուցիչ՝ տարբեր ցուցանիշների բազմազանության գործակցի հաշվարկման միջոցով<sup>48</sup>: Օրինակ, եթե ակնկալվում է, որ երկու՝ Ա և Բ ֆիսկալ ռեժիմներից յուրաքանչյուրն ունենալու է X% ԳԱՅԴ, սակայն Ա ռեժիմում տատանումների գործակիցը բարձր է Բ ռեժիմի նույնանուն գործակցից, ապա դա նշանակում է, որ կառավարությունը ավելի շատ ռիսկ է ստանձնում Բ ռեժիմի պարագայում՝ Ա-ի համեմատ՝ կապված ակնկալվող հասույթի հետ, որովհետև ԳԱՅԴ-ի համեմատ ավարտի պահին ակնկալվող շահութաբերությունը ավելիցած է:

Մոնտե Կառլոյի վերլուծության արդյունքները ամփոփված են Աղյուսակ 3-ում:

<sup>47</sup> Մոնտե Կառլոյի վերլուծության համար ոսկու և մոլիբդենի գները պահվել են հաստատուն, և միայն պղնձի գներն են տարբեր վերցվել հաշվարկը ոլորացնելու նպատակով:

<sup>48</sup> Տատանումների գործակիցը շեղումների չափանիշ է, որը ցույց է տալիս, տարբերության աստիճանը՝ ընտրանքի միջինի համեմատ: Օրինակ, ենթադրենք, որ մենք կատարում ենք պարզեցված Մոնտե Կառլոյի վերլուծություն ընդամենը երեք վերարտադրությամբ: Աերկրի համար NPV ցուցանիշները այս երեք վերարտադրությունների համար կազմում են 9, 10 և 11: Ա և Բ երկրների համար միջին NPV-ն կազմում է 10, սակայն դիսպերսիան եականորեն ավելի մեծ է Բ երկրի պարագայում, միևնույն Ա երկրի արդյունքները մի փոքր խմբված են միջինի շուրջ: Ա երկրի համար տատանումների գործակիցն եականորեն ցածր է՝ մատնանշելով, որ Ա երկիրը ավելի քիչ ռիսկ է վերցնում իր վրա, քան Բ երկիրը՝ ակնկալվող միևնույն եկամուտի դիմաց:

### Աղյուսակ 3. Գնային անորոշության ազդեցությունները

	Միջին IRR-ը սեփական միջոցներից, հարկում իցիտո	IRR վարիացիայի գործակիցը	Միջիններորդ ման NPV8-ը (ՄԱՄՆ\$)	Միջին զեղչված հատույցը (տարիներ)	Ակնկալվող ԳՄՅԴ (NPV8)	Ներդրողի՝ 10 %-ից ցածր հատույց ստանալու ռիսկի չափումը	Կառավարության NPV8 միջինը (ՄԱՄՆ\$)	Կառավարության NPV վարիացիայի գործակիցը
Զիլի	33%	47%	477.37	6	38%	0.0%	259.68	42%
Տանգանիա	32%	47%	397.91	6	52%	0.1%	350.09	40%
Հարավային Աֆրիկա	31%	48%	365.76	6	58%	0.3%	393.94	41%
Լիբերիա	30%	49%	342.79	7	58%	1.5%	397.12	46%
Չամբիա	29%	54%	330.35	8	66%	5.1%	448.51	38%
Գվինեա	29%	52%	331.22	7	62%	1.8%	405.10	34%
Ղրղզստան	29%	52%	416.32	8	52%	4.8%	319.81	27%
Պերու	29%	48%	356.20	7	57%	1.1%	378.33	41%
Հայաստան	28%	47%	354.18	7	58%	0.8%	387.23	39%
Ավստրալիա (WA)	27%	48%	280.06	7	69%	2.7%	483.39	41%
Բրազիլիա	26%	48%	369.15	8	58%	1.3%	373.86	35%
Մոնղոլիա	25%	47%	235.82	7	77%	4.3%	538.71	42%
Ղազախստան	25%	52%	283.67	8	70%	5.7%	471.20	41%

Վերլուծության մեջ մատնանշվում է, որ Հայաստանի՝ միջին ակնկալվող 58% ԳՄՅԴ-ն մի փոքր ցածր է խմբի՝ 60% միջին ցուցանիշից: Ըստ ամենայնի, սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ընտրանքում ընդգրկված խիստ բարձր շահութաբերության սցենարների պարագայում խիստ պրոգրեսիվ գործիքակազմ ունեցող որոշ ռեժիմներ կունենան այնպիսի արդյունքներ, որոնք կբարձրացնեն միջին ցուցանիշը: ՀՀ կառավարությանը հասնող՝ ակնկալվող միջին զուտ ներկա արժեքը (NPV) մի փոքր է ցածր միջին միջազգային՝ 400 Մ ԱՄՆ դոլար ցուցանիշից: Կառավարության զուտ ներկա արժեքի տատանումների գործակիցը, այդուամենայնիվ, համընկնում է խմբի՝ 30% միջին ցուցանիշին: Այսպես, Հայաստանը նույնքան ռիսկ է ստանձնում, որքան ընտրանքի միջին երկիրը, սակայն, սպասվող հատույցը մի փոքր ավելի ցածր է: Դա կարող է պահանջել որոշ ռեժիմի կատարելագործում որոշակի պահի:


### VI. Եզրակացություն

Հայաստանի ֆիսկալ ռեժիմը միանգամայն մրցունակ է ընտրված երկրների շարքում և հիմնական ցուցանիշների մասով մոտ է գլոբալ և տարածաշրջանային ցուցանիշներին: Այդ իսկ պատճառով այն համեմատաբար գրավիչ է ներդրողների համար, մինչդեռ խոստումնալից և կայուն պետական եկամուտները ենթակա են տարբեր պայմանների ազդեցության: Թեև այս ռեժիմի կառուցվածքը կատարելագործման տեղ ունի՝ հետագայում ռիսկ-հատույց հաշվեկշիռը մի փոքր բարելավվելու համար. Այդ հաշվեկշիռը որջամիտ է և առաջիկայում չի պահանջում լուրջ հայեցակարգային վերանայում՝ ֆիսկալ ռեժիմի վերջերս արված հիմնովին վերանայումից հետո:

Հայաստանի ֆիսկալ ռեժիմում խիստ շեշտադրված է ռոյալթին, և համակցված ռոյալթի փոփոխական բաղադրիչն, ըստ ամենայնի, ռոյալթի ամենամեծ բաղադրիչն է շատ հանքավայրերի համար: Ըստ այդմ, շատ կարևոր է, որպեսզի Հայաստանի Հանրապետությունն անի հնարավոր ամեն ինչ՝ դրույթաչափի բանաձևում օգտագործվող եկամուտների և շահույթի հաշվարկների մանիպուլյացիաները կանխելու համար: Համախառն եկամուտների կամ շահույթի թերձևակերպումները կունենան բաղադրված ազդեցություն, քանի որ դրանք կնվազեցնեն թե՛ ռոյալթի դրույթաչափը և թե՛ շահութահարկի բազան: Խորհուրդ է տրվում ներմուծել տրանսֆերտային գնագոյացման կայացած դրույթներ, այդ թվում փոխկապակցված անձանց միջև իրականացվող գործարքների հրապարակայնության ապահովման պահանջ: Փոխկապակցված անձանց միջև իրականացվող գործարքների պարագայում «գնորոշման նախնական համաձայնությունների» կիրառումը, ինչպես նաև միևնույն կազմակերպության մասնաճյուղերի միջև կայացվող գործարքներին վերաբերող կանոնների հրապարակումը և փաստաթղթավորումը ևս կարող է հզորացնել հարկային վարչարարությունը: Խորհուրդ է տրվում նաև նախատեսել ղեկավար անձնակազմի հոնորարների առավելագույն սահմանաչափ: Տրանսֆերային գնագոյացումը նույնքան խնդրահարույց է հանքարդյունաբերության ոլորտում, որքան այլ ոլորտներում, և Հայաստանը այս հարցը պետք է լուծի պետական, այլ ոչ թե առանձին ոլորտի բարեփոխման հարթությունում: Բացի այդ, չափազանց կարևոր է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական աուդիտի կարողությունների ամրապնդումը՝ լիարժեք և որակյալ հաշվետվություններ ապահովելու նպատակով:

Ինչպես նշվել է սույն փաստաթղթում, փոփոխական ռոյալթի կիրառումը ենթակա է որոշակի անորոշության. բազմաթիվ շահագրգիռ կողմեր կիսում են այն տեսակետը, որ գրեթե բոլոր ընկերությունների ռոյալթի դրույթաչափը 4-5%-միջակայքում է, թեև մոդելավորված արդյունքներն առաջարկում են, որ ռոյալթի դրույթաչափը ողջամիտ շահութաբերությունն ապահովող հանքավայրերի պարագայում պետք է մոտ լինի 9%-ին: Ենթադրյալ է, որ, ընդերքօգտագործողներն, ըստ եուլթյան, վճարում են 4%-ին մոտ ռոյալթներ, և դրա պատճառները պետք է ավելի լավ հասկանալ: Եթե պարզվի, որ ռոյալթի փոփոխական մասն անարդյունավետ է, ապա ազդեցությունը ողջ ֆիսկալ ռեժիմի գնահատման վրա բավականին նշանակալի կլինի: Գծապատկեր 7-ում բերված է պոտենցիալ ազդեցությունը՝ գործող միջին հարկադրույթի մոդելը կազմելով այն ենթադրությամբ, թե Հայաստանում կիրառվում է 4% հաստատագրված ռոյալթի (այսինքն՝ բացառելով փոփոխական բաղադրիչը): Նման դեպքում Հայաստանի Հանրապետությունում գործող միջին տոկոսադրույթը 56%-ից կիջնի 44%-ի՝ այս կերպ հայտնվելով ընտրված երկրների գրեթե ստորին հատվածում:

## Գծապատկեր 7



Եթե պատկան մարմինները գտնում են, որ իրենք ի վիճակի չեն տևական ժամանակ արդյունավետ հսկողություն իրականացնել ռոյալթիների և հարկերի հաշվարկների նկատմամբ, ապա երևի թե արժի դիտարկել փոփոխական ռոյալթիի այլ կառուցվածքներ (օրինակ, ճշգրտել դրույթաչափը՝ ի պատասխան միջազգային գների, այլ ոչ թե փորձել գնահատել շահույթը), պրոգրեսիվ այլ գործիքներ, որոնք պակաս խոցելի են գնադրյալ մանիպուլյացիաների նկատմամբ, կամ առավել շեշտադրել ֆիսկալ ռեժիմի այլ տարրերը (օրինակ, **շահույթ** հարկի առավել բարձր դրույթաչափ):

## Լրացուցիչ առաջարկություններ.

1. Պարզեցնել ֆիսկալ ռեժիմի իրավական ճարտարապետությունը՝ ֆիսկալ ռեժիմի բոլոր տարրերը համախմբելով մեկ միասնական օրենսդրական ակտում:
2. Զննարկել փոփոխական ռոյալթիի հաշվարկի նպատակով եկամուտի առանձնացման և շահույթի չափման կարգ ներդնելու հարցը:
3. Զննարկել խտանյութի մասով ռոյալթիի բազայի հաշվարկի համար Լոնդոնի մետաղների բորսայի գները, այլ ոչ թե պայմանագրային գինը կիրառելու հնարավորությունը, ռոյալթիի կիրառման նպատակով դիտարկել արտադրության հնարավորինս վաղ փուլում արտադրական ծավալները չափելու տարբերակը՝ կիրառելով առաջին «չափելի կետ» հասկացությունը, այլ ոչ թե առաջին «վաճառքի կետ» հասկացությունը: Թերևս ցանկալի կլինի ռոյալթիի դրույթաչափում

բալանսավորող ճշգրտումներ կատարել, եթե իրականացվի այս փոփոխություններից որևէ մեկը:

4. Չափազանց մեծ պարտքի ֆինանսավորման առաջացրած հարկային կորուստները սահմանափակելու նպատակով ներդնել թույլ միջոցավորման կարգ: Առաջարկվում է վերանայել թույլատրելի տոկոսադրույթները:
5. Վերանայել հարկերի կայունացման համակարգը և ներկայումս գործող՝ «Ժառանգություն ստացած» դրույթները: Զննարկել կայունացումը վերացնելու կամ դրա ընդգրկման շրջանակը կտրուկ սահմանափակելու հարցը:
6. Մշակել հանքավայրի փակման և վերականգնման համար առանձնացված ֆինանսական միջոցների հարկման մեխանիզմը հստակեցնող դրույթներ: Հարկ է նաև քայլեր ձեռնարկել, որպեսզի նորմատիվ-իրավական դաշտը լինի կայացած, իսկ վերականգնման համար նախատեսվող ֆինանսական միջոցները՝ բավարար:

## Օգտագործված գրականություն

- Հայաստանի զարգացման գործակալություն (2015) Հարկային ամփոփագիր
- Daniel, P. (2010) Evaluating Fiscal Regimes, in The Taxation of Petroleum and Minerals: Principles, Problems and Practice (IMF)
- EY (2014) Worldwide Transfer Pricing Reference Guide 2014 (available at: [http://www.ey.com/Publication/vwLUAssets/EY-Worldwide-transfer-pricing-reference-guide-2014/\\$FILE/Worldwide%20transfer%20pricing%20reference%20guide%202014.pdf](http://www.ey.com/Publication/vwLUAssets/EY-Worldwide-transfer-pricing-reference-guide-2014/$FILE/Worldwide%20transfer%20pricing%20reference%20guide%202014.pdf))
- OECD (2015) Limiting Base Erosion Involving Interest Deductions and Other Financial Payments, Action 4–2015 Final Report, OECD/G20 Base Erosion and Profit Shifting Project (available at: <http://dx.doi.org/10.1787/9789264241176-en>)
- PWC (2011) Armenia Pocket Tax Book (available at: [http://www.pwc.com/am/en/publications/assets/armenia\\_pocket\\_tax\\_book\\_2011\\_edition.pdf](http://www.pwc.com/am/en/publications/assets/armenia_pocket_tax_book_2011_edition.pdf))
- UNDP (2014) Ecosystem Services and their Role in Poverty Alleviation in Armenia: a case study of the Karaberd Gold Mine
- U.S. Geological Survey (2014) 2012 Mineral Yearbook: Armenia
- Վարդանյան և գործընկերներ (2015) Հարկային ամփոփագիր (available at: <http://armenian-lawyer.com/taxes-armenia>)
- World Bank (2011) Republic of Armenia Fiscal Consolidation and Recovery, Volume II





Հայաստանի AUA ամերիկյան համալսարան  
Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն  
Մարշալ Բադրամյան 40,  
Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն  
+374-60-612520  
crm@aua.am  
crm.aua.am

[mlri.crm.aua.am](http://mlri.crm.aua.am)

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության  
կենտրոնի՝ Հանքարդյունաբերության  
օրենսդրության բարեփոխման նախաձեռնությունը  
(ՀՕԲԼ) ֆինանսավորվում է Թուֆենկյան  
հիմնադրամի կողմից:

T U F E N K I A N

FOUNDATION